



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4009

491.99-8

U-25

2010

№ 2002

491.99-8  
5-25 u  
**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԶԽԱՐՀՔ**

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՅԵՂՅՈՒԹԵԱՆ**

**ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՎ,**

**ԵՒ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ**

ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒԱՅ

**ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ**

**ԵՐԿՐՈՐԳ ՏԻՊ**

Աւսումը լինի լուրջ, մանուկը լինի զուարթ.

Մանկավարժուհեան Գաղտնիքն այս

Ես ձեր սիրով տուն, տանիք,

Բարեկամներ, ընտանիք,

Յափշտակեալ կրմունամ

Ալիք, անգունդ, մահ անգամ:


Որհանեանից:

36300  
3452

**ՅՕՐԻՆԵՑ Ս. ՄԱՆԻՒՆԵԱՆ**

Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Մ ո վ ս ե ւ Վ ար դ ա ն ե ա ն ի Տ պ ար ա ն :

1886



2089

ՀԱՅԿԱՆԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Доз. Цензурою, Тиф. 25 Октября 1885 г.

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Մասին Գրագրական Եվ Գրագրական Գրագրական  
Գրագրական Եվ Գրագրական Գրագրական

Тип. М. Вартамянца, Троиц. пер., д. № 11.

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԶԽԱՐՀՔ



ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒԱՅ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ \*)

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

## ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ



\*) Այս երկու տեսակ հատուածներից իւրաքանչիւրը տարբեր տրձածութիւն ունի. տես «Բացատրութիւններ» ուսուցչի համար, և աւանդ վեցերորդ հատուածի (Ուժով կատուի) Ասորիւն վերին բացատրութիւնը:

ԳՅՂՄՈՒՆՅԱ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ

ՅԱՎՈՂՈՅ ՅԿՋՊՈՅ

ԳՅՂՄՈՒՆՅԱ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ

ԴՅՄՄԱՐ ԿՅՄՄԱՐԿՈՒՆԵՐԳ

ԴՅՄՄԱՐ ԿՅՄՄԱՐԿՈՒՆԵՐԳ

ԳՅՂՄՈՒՆՅԱ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ

ԳՅՂՄՈՒՆՅԱ  
ՄԱՐԿՈՒՆԵՐԳ  
ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ

ԳՅՂՄՈՒՆՅԱ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ

ՆԱԽ ԱՐՁԱԿ ԵՒ ԱՊԸ ԲԱՌ ԱՌ ԲԱՌ

ՊԱՏՄԵԼՈՒ \* ) ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ  
ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ  
ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ  
ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ

Ի. ՃՆՃՂՈՒԿ

ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ  
ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ  
ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ  
ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ ԿՅ ՄԱՐԿՈՒՆԵՐԳ

Կտուրը ցորեն փուսցի՝ չորցնելու համար,  
Ճնճղուկներ եկան ժողովան՝ ուտելու համար,  
Քարը վեր կալայ խփեցի՝ սպանելու համար,  
Թռան դնացին բերդի տանիք՝ զանգտելու համար,  
Ղասաբի դանակ ուզեցի՝ մորթելու համար,  
Մեծ պղինձն ուզեցի՝ եփելու համար,  
Սաղ քաղաքը մեծարեցի՝ ուտելու համար,  
Երէցներ ժողովեցան՝ օրհնելու համար,  
Աղջիկներ ժողովեցան՝ բմբուլի համար,  
Պառաւներ ժողովեցան՝ փետելու համար,  
Քեօխուլայ-գզեր տոճն վազեցին՝ խորվածի համար,  
Քեթխուղէք բազմեցան՝ այս գովքի համար—

\*) Աստուծան վերջերը նաև կ'ըլլաւ յարմար են սոյն այս հատուածները

Այ ճնճո-գէի,  
 Կորիբ րորիէ,  
 Սեդրուի քորիէ,  
 Ուրեմ կորիէ,  
 Իբն լըբիէ,  
 Աւու-ի եղբիէ,  
 Պըրթի ղըրթիէ

Փախչեն երթան՝ մանգալու համար:

2. ԱՔԱՂԱՂ.

Կուկուկուկու սանամէր,  
 Էն մէկ հաւ կար, ուր գնացի,  
 —Շարաւ աղբուր կուլ գնացի,  
 Ինչ կար կառուցի.—Չեր ու չամիչ:  
 Ո՞ւր էր տանումս.—Հարս ու փեփսնո  
 Հարսն ուր է նստել.—Ոսկէ թախտին,  
 Հարսն ինչ է եփումս.—Կծուրկոտ:  
 Ո՞վ է բերել.—Պստի լակոտ:  
 Ո՞վ ապարել.—Չաչար Ա՛կոր:  
 Ո՞վ է հարել.—Աղա Սճլթան,  
 Ո՞ւր է դրել.—Բաց պատուհան:  
 Ո՞վ է կերել.—Կարայ փըշիկ:

Վայ կարայ փըշիկ, Վայ կարայ փըշիկ.  
 Քո մէրն ուտի քո թըշիկ:

3. ԱՐԵԳԱԿ.

Արեգակ, արեգակ, գուրս արի,  
 Հերն ու մերդ եկել են,  
 Ոսկէ բլիթ բերել են,  
 Պատի ծակը կոխել են:

Մուկն եկել է, տարել է,  
 Կատուն յետնէն վաղել է,  
 Գոմշի ոտը կոտրել է,  
 Աղամանը վեթել է:

4. ԱՌԱԽՈՏ.

Լուսացաւ, լուսացաւ...  
 Լուսն է բարին,  
 Միան է ծարին:

Հուս է բարին.  
 Աշխարհուր, վեր կաց բանի,  
 Մայլ ճարտար տունը րանի:

Երբեք րուները բաց եր,  
 Ուրի արուը րբժ եր,  
 Քրեարուը լրեն ծարձ եր,  
 Լուսարուը կանգնե՞ր,  
 Մեծ — դարիէ քրու՞ էր,  
 Արդարները եւրու՞ էր,  
 Մուլարները լուրի՞ էր:

5. ՔՈՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ.

Ելենմ ծառը զարդարեմ,  
 Աէր գամ տակը մինդարեմ,  
 Հաւի վառիկը մորթեմ,  
 Տանեմ գետը՝ լուսնամաս՝  
 Եփեմ ու չորանին տամ,  
 Չորանն ինձ մէկ ոչխար տայ,  
 Ոչխարըն Աստուան տամ,  
 Աստուած ինձ մէկ եղբայր տայ:

\* \*

Եղբայր, եղբայր, ջան եղբայր,  
 Չանքս բեղ մատաղ, եղբայր.  
 Գարայ եմ կարել, կարճ եկել,  
 Բուզմայ եմ շարել, խոչ եկել.  
 Ճնճուղի լեզուն մեղրով  
 Բեզ համար եմ տապակել:

6. ՈՒԺՈՎ ԿԱՏՈՒ.

Եղել է մէկ տրմփուան շուն, գնաց մտաւ բաղերի մէջ.  
 Բաղը կոտրեց նորա ոտը, շունը հարցրեց՝  
 Ասաց—տօ, բաղ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի՝ արեգակն ինձ չէր այրի:  
 Գնաց արեգակի մօտ՝ ասաց—տօ, արեգակ, դու շատ  
 ուժով ես:  
 Ասաց—հո՛ւ, ես որ ուժով լինէի, ամպն իմ գէմս չէր բռնի:  
 Գնաց ամպի մօտ՝ ասաց—տօ, ամպ, դու շատ ուժով ես:

Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, անձրեւն ինձնից չէր կաթիւ  
 Գնաց անձրեւի մօտ՝ ասաց—տօ՛, անձրեւ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, խոտն ինձնից չէր բուսնի:  
 Գնաց խոտի մօտ՝ ասաց—տօ՛, խոտ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, գառն ինձ չէր ուտի:  
 Գնաց գառան մօտ՝ ասաց—տօ՛, գառ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, գայլն ինձ չէր ուտի:  
 Գնաց գայլի մօտ՝ ասաց—տօ՛, գայլ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, շուկն ինձ չէր խեղդի:  
 Գնաց շան մօտ՝ ասաց—տօ՛, շուկ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, պառաւն ինձ չէր ջարդի:  
 Գնաց պառաւի մօտ՝ ասաց—քա՛, պառաւ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, մուկն իմ հացը չէր կրծի:  
 Գնաց մկան մօտ՝ ասաց—քա՛, մուկ, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես որ ուժով լինէի, կատուն ինձ չէր ուտի:  
 Գնաց կատուի մօտ՝ ասաց—քա՛, կատու, դու շատ ուժով ես:  
 Ասաց—Հո՛ւ, ես ուժով եմ, որ ուժով եմ.

Մանրիկ, սպիտակ ատամ ունիմ,  
 Սուր սուր զայիմ ճանկեր ունիմ,  
 Սամուր քիւրքէ մուշտակ ունիմ,  
 Աղէքտեկաց մուշտակն եմ,  
 Խաթիւնտեկաց շուշտակն եմ:  
 Ամառ պառկած ծալքի գլխին,  
 Զմեռ քնած թոնրի կշտին—  
 Մեան, մեան, մըլաւան եմ,  
 Մկներտեկաց հոգեհան եմ:

7. Ա.Ի.Ա.Գ. ՄԿՆԻԿ.

Աւագ մկնիկ խաթունը լաչաբը քաշեց գլխին և գնաց-  
 եւ վե՛ր դուրս եկաւ նորա առաջ և ասաց. «Խէր ըլի, աւագ մկնիկ՝  
 այդպէս շտապով ո՛ւր ես գնում»:

— Խէր բարին վրէժ ըլի, գնում եմ մարդ ճարելու:  
 «Գնա՛, Աստուած յաջողի»:  
 Գնաց, գնաց, առաջն եկաւ բեր-ուրիւ և ասաց. «Խէր ըլի,  
 աւագ մկնիկ, այդպէս շտապով ո՛ւր ես գնում»:  
 — Խէր բարին վրէժ ըլի, գնում եմ մարդ ճարելու:  
 «Գնա՛, Աստուած յաջողի»:  
 Գնաց, գնաց, ծ-ի՛ եկաւ առաջը և ասաց. «Խէր ըլի,  
 աւագ մկնիկ, այդպէս շտապով ո՛ւր ես գնում»:  
 — Խէր բարին վրէժ ըլի, գնում եմ մարդ ճարելու:  
 «Գնա՛, Աստուած յաջողի»:  
 Գնաց, գնաց, ահագին առ եկաւ առաջն ու ասաց. «Խէր  
 ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ո՛ւր ես գնում»:  
 — Խէր բարին վրէժ ըլի, գնում եմ մարդ ճարելու:  
 «Գնա՛, Աստուած յաջողի»:  
 Գնաց, գնաց, կ-ի՛ եկաւ կրկնալով առաջն եկաւ և ասաց. «Խէր  
 ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ո՛ւր ես գնում»:  
 — Խէր բարին վրէժ ըլի, գնում եմ մարդ ճարելու:  
 «Գնա՛, Աստուած յաջողի»:  
 Գնաց, գնաց, թագաւորի աւագ թռաւ եկաւ առաջ և ասաց.  
 «Խէր ըլի, աւագ մկնիկ, այդպէս շտապով ո՛ւր ես գնում»:  
 — Խէր բարին վրէժ ըլի, գնում եմ մարդ ճարելու:  
 «Արի ինձ առ»:  
 — Ինձ ինչո՞վ կը պահես:

Կտուցովս:  
 Մէկմէկու հաւանեցին, գնացին եօթն օր, եօթը գիշեր հար-  
 սանիք արեցին, պսակուեցան:

Հարսանիքից պաճան. արլարը գնաց քճէճ անելով դա-  
 դում ճարելու. աւագ մկնիկն էլ մտաւ թոնրի, որ վառի. Թոնրի  
 կրակը կպաւ, աւագ մկնիկը մնաց թոնրի մէջ, եղաւ ճժտիկ-  
 վժտիկ:  
 Աքլարը երեկոյեան տուն եկաւ, տեսաւ որ աւագ մկնիկն

ընկել է թոնիրը, եղել է ճժտիկ-վժտիկ. գնաց կատարը կտրեց, կրամոխիր թափեց գլխին ու նստեց:

Կալուսի եկաւ տեսաւ, ասաց. «Աքլարիկ, դու ինչո՞ւ ես կատարկտրիկ, մոխրաչափիկ»:

— Օհ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկաւ թոնիր, եղաւ ճժտիկ-վժտիկ:

Կաչաղակի փետուրները թափուեցան, գնաց նստեց ծառի վրէն:

Ծառիկն ասաց, «Կաչաղակիկ, դու ինչո՞ւ ես թեւաթափիկ»:

— Օհ, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Ծառը կոտրեցաւ, ընկաւ քարի վերայ:

Բարն ասաց. «Ծառիկ, դու ինչո՞ւ ես ճղակտոր»:

— Օհ, ծառիկ ճղակտոր, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Քարը գլորուեց, գնաց ծով:

Ծովն ասաց. «Քարիկ, դու ինչո՞ւ ես գլոր մլոր»:

— Օհ, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակտոր, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Ծովն էլ մէկէնմէկ բրորաւ:

Բեր-բերն ասաց. «Ծովիկ, դու ինչո՞ւ ես բրոր-մրոր»:

— Օհ, ծովիկ բրոր-մրոր, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակտոր, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Բերւորիկը կթոցը շրջեց և գնաց:

Հովն իրան դէմ ելաւ և ասաց. «Բերւորիկ, դու ինչո՞ւ ես կթոց շրջիկ»:

— Օհ, բերւորիկ կթոց շրջիկ, ծովիկ բրոր-մրոր, քարիկ գլոր-մլոր, ծառիկ ճղակտոր, կաչաղակիկ թեւաթափիկ, աքլարիկ կատարկտրիկ, մոխրաչափիկ. աւագ մկնիկն ընկել է թոնիր, եղել է ճժտիկ-վժտիկ:

Հովիւն այս որ լսեց, ոչխարներին անտէր թողեց գնաց. մաքին մկկալով ետեւն ընկաւ մխիթարեց դարձրեց բերեց, ետեւն անգամ պտրտեց ոչխարներին բոլորը և ասաց:

«Աւագ մկնիկ կողի վերայ,

«Աւագ մկնիկ կողի վերայ,

«Աւագ մկնիկ կողի վերայ»:

### 8. ՄԱՐԻ ՈՒ ԿՆԿԱՅ ՍԵՐ.

Երէի. քա կնիկ, արի անենք բարակ բովիկ, ասնք ասնենք չինգ վեց էծիկ, երկու կովիկ:

Կռիկ. Դու կ'անես բարակ բովիկ, կու տաս կ'առնես չինգ վեց էծիկ, երկու կովիկ: Ես էլ կ'երթամ մածուն մերեմ, սերն էլ վրան:

Երէի. Դու կ'երթաս մածուն մերես, սերն էլ վրան. Ես կը դառնամ բռան կատու, կու գամ կ'ուտեմ:

Կռիկ. Դու կը դառնաս բռան կատու, կու գաս կ'ուտես: Ես կը դառնամ կաղնի կոմբալ, որ քո կողքիդ կոտրուեմ:

Երէի. Դու կը դառնաս կաղնի կոմբալ, որ իմ կողքիս կոտրուես: Ես կը դառնամ ձուլ-ձուլ խաղող թփից կախած:

Կռիկ. Դու կը դառնաս ձուլ-ձուլ խաղող թփից կախած: Ես կը դառնամ սուր-սուր դանակ, գամ քեզ կտրեմ:

Երէի. Դու կը դառնաս սուր-սուր դանակ, գաս ինձ կտրես: Ես կը դառնամ կարմիր գինի, լցուեմ կարաս:

Կռիկ. Դու կը դառնաս կարմիր գինի, լըցուես կարաս: Ես կը դառնամ Սարխոջ Մայրո, գամ քեզ խմեմ:

Երէի. Դու կը դառնաս Սարխոջ Մայրո, գաս ինձ խմես: Ես կը դառնամ թեթ թունդ քացախ, քեզ ճաքացնեմ:

### 9. ԾԵԾՈՒԱԾ ԳՍՈՆԻԿ.

«Ինչիւ կու լուս դուս, գառնիկ»:

— Խոտ ծեծ կեայ ես, մարիկ:

«Ո՞վ ծեծեց քեզ, իմ գառնիկ»:

— Մէկ ծեծ պտուս փիս կնիկ:

«Ինչիւ ծեծեց քեզ, գառնիկ»:

— Ծառի տակն էի, մարիկ:

«Ինչիւ ծեծեց քեզ, գառնիկ»:

— Մէկ ճիպոտով, իմ մարիկ:

«Ո՞ր տեղդ խփեց քեզ, գառնիկ»:

— Ոտիկներես, իմ մարիկ:

«Ի՞նչպէս լացիք գուս, գառնիկ»:

— Մէ, մէ, մէ, մէ, իմ մարիկ:

10. ԱՂՈՒԷՍԻ ԹԻՔԷՆ.

Մէկ շաղ հաս կար, վեղն էրկն էր,  
Հեռը յաբեր աստուծէն էր.

Աղուէն հեռուէն ճեղհեցաւ էր:  
Աղուէն ասաց. «Տեղս նեղ է:

Հասի վառի ժողովս բեր է»:  
Աղուէն գորտոյ աստուծոնէն

Անցաւ, պարտէն ողբի ասուց,  
Պաշտօնից րեւ աստուծին,

Մտաց աստուծոյ աստուծին:  
Աղուէն էկաւ աստուծին,

Բանց յեր կարան կանախից,  
Աստուծէն րեւ ի րարին:

«Եւ ինչո՞ւ էս օրն էս վառից»:  
«Տեղս նեղ է, աստուծս նախնայ»:

11. ՄՈՆԹ.

Մէկ պստկեկ մարդ կար չրկար,  
Անպատի մէջ ճգնում էր.

Օր՝ կորեկի մի կուտ կ'ուտէր,  
Վէսն աղքատի բաժին կ'անէր.

Տղոր մէջքով հող էր կրում,  
Բորիկ ստով փուշ էր քաղում:

Եկեղեցու պատն էր շարում,  
Ինքն էր գրում: Ինքն էր կարդում:

Չում իրիկուն աղօթք անում:  
\* \* \*

Օրն էր շաբաթ լոյս կիրակին,  
Պատարագի պակսեց բաժկին:

\* \* \*

«Մինչև քաղաք մէկ գնացի,  
Գլուխըս ղըրի քիչ քուն արի.

Ոտնակտոր մոլորուեցայ,  
Քաղցր աղբիւրին ըռաստ եկայ»:

«Երեք հատ գող իմ դէմս ելան,  
Մէկն ասաց—խփենք կորցնենք,

Մէկն ասաց—ճամփից հանենք.  
Մէկն ասաց—ոչ խփենք կորցնենք:

Ոչ ճամփից հանենք.  
Աշխարհքի մեղքը

Վրէն շալկենք—տանի.  
Մէկ կտոր տեղ ես գնացի՝

Սաղմոսարանս կորեցի,  
Մէկ կտոր էլ տեղ գնացի՝

Աւետարանըս խորեցի.  
Մէկ կտոր էլ որ գնացի՝

Ժամագիրքս թաղեցի:  
Վարձն ասեմ, այնքան գնացի՝

Մինչ «մեղասո՞ւն» էլ մոռացի,  
Տէր, Դու գիտես, կամքդ Բոնն էսոր՝

Ես Բո ստեղծած, Դուն իմ Աստուծ:  
12. ԱՆԻԵԼԻՔ ՄԱՐԴ 1).

Եղել է մէկ մարդ շատ հարուստ, ունեւոր, ծուռ-մուռ

ապրելով, ինչ ունէր չունէր կերաւ, նստեց դատարկ: Հաց-

մաց կտրուեցաւ. մէկ ձեռքը դրեց ծոցը, մէկ ձեռքը երեսին՝

չէր իմանում ինչ անէ: Սխ վախ անելով՝ հալվում մաշվում էր:

Բարեկամներն եկան \* գլխին հաւաքուեցան, և նոցանից

ծերը առաւ ու ասաց. «Իու մէկ մեղք ես գործել, քո գան-

ձանակը քեզանից \* խրտնել փախել է. վեր կաց \* գնա քո գան-

ձանակի ետև, զուցէ էլի \* գտնես և առաջուայ պէս բախ-

տաւորուես»:

1) Մինչև այստեղ պատմութեան և ընթերցանութեան հա-

տուածներն իրարից բաժանուած էին. այսուհետև նոյն այս պատ-

մութիւններն էլ պիտի կարգացուին. Կարգալու ժամանակ աստղանիշ

բառերի վերայ մանուկներն առանձին ուշադրութիւն պէտք է դարձնեն:

Մարդը \* զլիւի ընկաւ. վեր կացաւ սար ու քար ընկաւ, գիշեր ցերեկ իւր գանձանակը \* փնտռեց: Մէկ գիշեր երազում տեսաւ, որ իւր գանձանակը \* բարձր սարի վերայ \* գլուխը \* ծռած \* նստած է և նա էլ ան ու վնիս է անուամ: \* Առաւօտեան զարթնելիս այն սարի ճանապարհը բռնեց:

\* Գնաց ճանապարհին մի առիւծ տեսաւ \* նստած: Առիւծը մարդուն կանչեց հարցրեց. «Ո՛ւր ես գնում»: Մարդն ասաց. «Գնում եմ \* գանձանակս գրտնեմ»: Առիւծն ասաց. «Ես գիտեմ, որ քո \* գանձանակդ շատ գիտուն է. նորանից հարցրու տես, թէ ես ինչով կըլաւանամ, ահա եօթը տարի է հիւանդ եմ. դառնալուդ արի ինձ պատմիր, ես էլ իմ ձեռքից եկած լաւութիւնը կ'անեմ»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, տեսաւ մէկ այգի, որ հազար \* նմուշ \* պտղով \* լցուկ էր. քանի քաղեց որ ուտի, տեսաւ որ լեզի են: Այգու տէրը \* նշմարեց, այս մարդու վերայ բարկացաւ, յետոյ հարցրեց. «Ո՛ւր ես գնում»: Մարդն իւր դարդը պատմեց այգու տիրոջ: «Դէ, թէ որ այգւպէս է, քո գանձանակից հարցրու իմ այգու դարմանն ինչ է, որ ինչ անեմ չ'անեմ, պտուղները դառն են \* բհամ գալիս: Պատրուս արեցի՝ չ'ելաւ. նոր ծառ \* տնկեցի՝ չ'ելաւ: Երբ դառնաս՝ պատասխան բեր ինձ, իմ ձեռքից էլ ինչ լաւութիւն գայ, կ'անեմ քեզ»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, գնաց, հասաւ մէկ շէն-շքեղ բերդ. մտաւ մէջը, տեսաւ որ մէկ ջահիլ աղջիկ պալատի մէջ ման է գալիս: Նա այս մարդուն հարցրեց. «Ներայր, դու այստեղ ինչ բան ունիս»: Մարդն իւր զլիւի եկածը պատմեց:

Աղջիկը դարձաւ ասաց նորան. «Ես շատ գանձ \* հարստութիւն ունիմ, շատ մալ ու ապրանք. բայց մի ցաւ ունիմ, որ գիշեր ցերեկ վիշտ է սրտիս: Թէ որ քո գանձանակից ինձ համար մի ճար հարցնես, ամենայն տեսակ բարութիւն կու տամ քեզ»: Մարդը խօսք տուեց, գնաց:

Գնաց, գնաց, ահա տեսաւ, որ իւր գանձանակը սարի \* զլիւին նստել է: Բարև \* տուեց, \* նստեց. շատ գանդատ արեց, վերջը \* ապսպրած բաների ճարը հարցրեց, ամենի պատասխանն առաւ:

«Դէ, հիմի վեր կաց, գնանք», ասաց:

— Ի՞նչ առաջ գնա, ես էլ կու գամ, ասաց գանձանակը: Մարդը դարձաւ, առաջ այն \* աղջկան տեսաւ, ասաց. «Քո դեղն այն է, որ դու մէկ կտրիճին ամուսնանաս, քո վիշտն ու ցաւը կ'անցնի»:

Եկաւ այգին. տիրոջ կանչեց, ասաց. «Քո այգու ջուրը որ առուից որ գալիս է, այն առուի մէջ ոսկէ հանք կայ, ոսկույ փշրանքը \* ջրի հետ գալիս է, ծառերը \* ծծում են, \* պտուղները դառնանում են. կամ \* ջրի առուն փոխիր, կամ հանքը փօրեր և դուրս հան, \* պտուղները կ'անուշանան»:

Եկաւ առիւծի մօտ, \* նստեց մարդը, պատմեց իւր գանձանակի տեսնելը, այգու տիրոջ ու աղջկայ բաները: Առիւծը հարցրեց. «Աղջիկը քեզ լաւութիւն չ'արեց»: Մարդն ասաց. «Ի՞նչպէս չէ, ասաց. «Արի դու ինձ առ, \* նստենք մէկ տեղ Աստծու բարութիւնը վայելենք, ես համաձայն չ'եղայ»:

Առիւծը հարցրեց. «Այգու տէրն ինչ լաւութիւն արեց»: Մարդն ասաց. «Այգու տէրը ոսկու հանքերը հանեց, կօլօլ ոսկի դառան, ինձ տուեց: Ես չ'առայ, ասացի՝ Ո՛վ այդքան բան կըշալկէ և տուն կըտանէ»:

«Ե՛, ասաց առիւծը, ինձ համար ինչ դեղ ասաց»: Մարդը պատասխանեց. «Բեզ համար էլ ասաց, որ եթէ մէկ անխելք մարդու գլուխն ուտես, կըլաւանաս»:

Առիւծը սորա ասածները օրինաւոր կերպով վեր դիր արեց. թաթը պարզեց մարդու \* գլուխը, \* բռնեց գետնով տուեց, \* փշրեց կերաւ: Ասաց. «Ես իմ Աստուած, քեզանից էլ անխելք մարդ այս աշխարհքում չեմ \* գտնիլ»:

13. ՆԱՀԱՊԵՏՆՅ ԱՂՋԻԿ.

Ժամանակով նահապետենց Բագրի կար, շատ հարուստ էր: Միտք արեց Երուսաղէմ գնալ: Իւր \* տղի, իւր \* կնկայ հետ ճանապարհ ընկաւ: Սոքա ունէին մէկ \* աննման աղջիկ, հասած աղջիկ, կոյս աղջիկ: Այդ աղջիկը պահ տուին գիւղի ռէսի տունը:

Ռէսի միտքը փոխուեցաւ, ուզեց աղջկան իւր կին շինել. շատ աշխատեցաւ՝ չրկարողացաւ \* աղջկայ սիրտն առնել. պառաւնների ջաղերով էլ չրկարողացաւ: Աղջիկը երբ որ շատ նեղն ընկաւ, խօսք տուեց և ասաց ռէսին. «Ռէ որ այդպէս է, արի առաջ գլուխդ լուանամ, որ մաքրուիս»: Սապոնը լաւ \* փրփրացրեց. քիթ, բերան, աչք ու երես \* փրփուրով \* լրցրեց. ուզածիդ պէս քօթկեց ռէսին, ջարդեց թև թիկունքը, \* գլուխ \* մլուխը, թողեց գնաց:

Ռէսը սապոնի \* մոմուռից չրկարողացաւ աչքերը բանալ. կատաղութիւնից արիւնը գլուխն ընկաւ, խելքը գնաց, մինչև որ հան-հուն խելք գլուխ ժողովեց, վեր կացաւ \* լուացուեցաւ, սրբուեցաւ: Տեսաւ, թէ ինչպէս խաղբ խայտառակ եղաւ, ասաց. \* «Համ կամքս չրկատարուեցաւ, համ աշխարհքի ծաղր ու ծանակ դառայ՝ գիւղի մեծ ու \* սլտկի առաջ, ինչ անեմ»: Վեր կացաւ \* աղջկայ հօրը գիր \* գրեց, թէ՛ Դուք ձեր աղջիկը ինձ պահ տուիք, ամա ձեր աղջիկը փախաւ. երես բաց հարիւր մարդու տուն գնում գալիս է:— Աղջկայ հայրն ու մայրը գիր որ առան, ուխտ-մուխտ հարամ դառաւ իւրեանց \* գլխին. վեր կացան դարձան տուն գալու: Հայրը շատ բարկացաւ, ասաց՝ գնամ սպանեմ \* աղջկաս, որ ինձ անպատիւ արեց:

Աղջիկը գիտէր, որ հայրը շատ կատաղած է, վախեցաւ, տուն չեկաւ: Վեր առաւ իւր աղուխը, հաւի արեան մէջ թաթխեց, հովուին \* տուեց, ասաց. «Տար \* հօրս տուր, ասա

\* աղջիկդ քեզ համար մեռել է»: Ինքը գնաց կորչելու: Դնաց, գնաց, անտառի մէջ մոլորուեցաւ. տեսաւ \* ջրի աւազան, աւազանի մօտ չինարի ծառ. ելաւ չինարի ծառի գլուխը \* նստեց: Ետ մնաց, քիչ մնաց, Ոստանայ թագաւորի որդին եկաւ որս, իջաւ աւազանի մօտ: Արեգակը չինարի ծառի շուքը \* խփել էր աւազանի մէջ, շուքի միջից էլ մէկ մարդու շուք էր երեւում: Թագաւորի որդին վերև նայեց, տեսաւ որ մէկը \* ճղների մէջ պահուել է: Ասաց. «Ի՞նչ ես, ջին ես, ադամորդի ես. ցած կու գաս՝ արի, թէ չէ՝ մէկ նետուանեղով ցած կրբերեմ քեզ»: Աղջիկն ասաց. «ես ոչ ին եմ, ոչ ջին: Ես էլ քեզ պէս ադամորդի եմ: Ես կ'իջնեմ, ամա \* տկոր եմ, կոյս աղջիկ եմ. քո կաբէն գիր այդտեղ, դու քաշուիր այն կողմը, ես գամ հագսեմ»:

Աղջիկն իջաւ, հագաւ կաբէն: Թագաւորի \* տղէն եկաւ տեսաւ, որ մի մարալ աղջիկ է, որ չ'ուտես \* չըխմես, միայն Երեսը նայես: «Ել ինչ որս անեմ, դու եղիր իմ հարս»: Աղջկան ձի նստեցրեց, տարաւ տուն, թագաւորին ասաց. «Հայր, իմ ուզածը իմ բերած աղջիկն է»: Հայր մայր ասացին. «Որդի, ո՞վ գիտէ այն ինչ ջինս է, անտառի մէջ \* գտած աղջիկը մարդուց է, դիւանական է, ինչ է»:

— Չէ, ասաց, \* տղան, ես նորան պէտք է առնեմ:

«Քո մուրը՝ քո ճակատին», ասացին: Աղջկան նշանեցին, \* պսակեցին. մէկ տարուց լետոյ Աստուած զաւակ տուեց նոցա: Մինչև այս օր հարսը փեսի հետ չէր խօսել: Մէկ օր հարսը իւր \* տղին օրօրոց \* գրեց, մէկ ձեռքով օրօրեց, մէկ բերան զովքն ասաց, մէկ բերան էլ լաց եղաւ: Փեսան այդ ժամանակ հասաւ, ասաց. «Կնիկ, ինչի՞ ես լաց լինում, զարդգ ինչ է»:

— Ա՛խ, ասաց, իսկի չես ասում՝ ես էլ հայր ունիմ, մայր ունիմ, ջիգար ունիմ, կարօտել եմ. խօ ես քարից չեմ

3459 1008 3416



ծնուել, ծառի \*վրէն չեմ բուսել: Ի՞նչ կ'ըլի, թողնես երթամ \* հօրս \* մօրս տեսնեմ, դառնամ:

Թագաւորի տղէն կանչեց իւր վեզիրին, սայլեր սարքել տուեց, հարիւր ջան էլ գօրք: Վեզիրին ասաց. «Քո խաթունիդ տար հօրանց տուն, դու դարձիր»:

Գնացին մէկ օրուայ ճանապարհ. իջան, հաց կերան, ամեն մարդ գնաց \* հանգստանալու. վեզիրը չի քնում: Դու մի ասա խաթունի երեխին ուզում է գողանալ, իւր երեխին տեղը դնել: Գնաց կամաց խաթունի երեխին \* փախցրեց. տեղն ուրիշ դրեց: Վեզիրը տարաւ խաթունի երեխին մօրթեց: Խաթունը մի երեխի ձայն իմացաւ, ասաց. «Այս իմ երեխի ձայնն է, բայց պառկածն ի՞նչ է»: Նայեց, ճանաչեց, որ փոխել են: Վեզիրը հեռուից գալիս էր թուրը սրբելով: Խաթունն իմացաւ, որ մօրթողը նա է: Փախաւ անտառը, հասաւ մէկ \* հովուի ասաց. «Հովիւ, հովիւ, իմ հալաւը տամ քեզ, քո հալաւը ինձ տուր»:— Աչքիս վերան, ասաց ու փոխեցին: Մի քօլօզ էր \* գլխին հագաւ, մազերը \* կտրտեց, գնաց իւր հօր տունը:

Բազիկը \* դրան \* կշտին \* նստած էր, չիբուխ էր քաշում: Գնաց ձեռքը պաչեց, բարև տուեց, բարև առաւ: Դարձաւ Բազիկը հարցրեց. «Քօլօզով տղայ, որտեղից ես գալիս քնչ կ'ուզես»:

Ասաց. «Աղա, լսել եմ շատ \* մշակներ ունիս. ինձ էլ բռնէ, մի բանի դիր. հացբերան կ'աշխատեմ»:

— Գնա, ասաց, մեր հաւերն արածացրու:

Դոքա մնան այդտեղ, մենք դառնանք վեզիրին:

Վեզիրը ետ դարձաւ, թագաւորի տղին այս պատմեց «Քո կնիկը քո գաւակիդ սպանեց, գիշերանց թողեց փախաւ»:

Թագաւորի որդին առաւ վեզիրին, շատ գօրք ու գնաւ \* փնտռելու: Գնացին իջան Բազիկանց տունը, հարց ու փորձ արեցին, ոչինչ չ'իմացան: Իրիկնահաց կերան: Թագաւորի որդի ասաց. «Հէքիաթ ասող չ'ունիք, ականջ անենք»: Չայնն ընկաւ

Հաւարածի ականջը. «Ես կ'ասեմ հէքիաթ»: Բազիկն ասաց. «Ամօթ է, այն կեղտոտ տղին մի հանէք թագաւորի որդու առաջ»: Թագաւորի որդին իմացաւ, ասաց. «Թողէք, թող գայ, բան չըկայ»: Քօլօզով տղէն եկաւ, \* նստեց, ասաց. «Ես հէքիաթ կ'ասեմ, ամա գիւղի ուէսն ու վեզիրը պէտք է գան այստեղ նստեն. \* դռները պէտք է փակեմ, մարդ դուրս չըգնայ, մինչև ասեմ \* պրծնեմ»: Կանչեցին, վեզիրն ու ուէսը եկան. դռները փակեց, բերանը բաց արաւ. իւր \* գլխով անցածները հէքիաթ էր շինել ու պատմեց: Երբ որ խօսքը ուէսի վերայ եկաւ, ուէսի փորի ցաւը \* բռնեց. խօսքն եկաւ վեզիրի վերայ, վեզիրի փորի ցաւը \* բռնեց. ինչ արին, \* դռները բաց չ'արաւ, մինչև իւր հէքիաթն աւարտեց: Դարձաւ ասաց. «Դու իմ հայրն ես, սա իմ էրիկն է, դա այն սատանայ ուէսն է, սա էլ սատանի քեռի վեզիրն է, ես էլ ես եմ»:

Իսկոյն վեզիրի վիզը \* թուցրեցին, ուէսի փորը թափեցին: Հայրն ու աղջիկը, էրիկն ու կնիկը մէկմէկու վերայ ուրախացան:

14. ԳԱԶԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Մէկ իշխանի տղան ուզեց թագաւորի աղջիկ՝ չրտուեցին: Նա քաղաքից ու \* տնից հրաժարուեցաւ, գնաց հեռու անտառի մէջ բնակելու, և ապրում էր ամենայն օր որս անելով:

Մէկ օր սովորութիւնից դուրս երկու որս \* բռնեց. դառնալու ժամանակ տեսաւ, որ իւր բնակարանի մօտ մէկ աղուէս է \* նստած, նա իսկոյն վազեց մարդու ձեռքից որսերն առաւ \* շնորհքով մաքրեց պատրաստեց. մէկը բերեց մարդուն, միւսն ինքը ճաշակեց:

Միւս օր դարձեալ որսի գնաց, և երեք որս որսաց: Մըտքում ասաց. «Երևի այս օր էլ նոր հիւր ունիմ»: Եկաւ տեսաւ

ահագին արջ է նստել աղուէսի \* կշտին: Աղուէսը վագեց առաւ որսերը պատրաստեց, և մէկ մասն էլ արջին համեցէք արեց:

Մէկ էլ օրը չորս որս որսաց և դառնալիս տեսաւ, որ մի քաջ բազմել է արջի մօտ: Աղուէսն իւր պաշտօնը կատարեց: Առաւօտը՝ հինգ որս որսաց, դարձաւ տեսաւ ահագին առիւծ փառաւոր բազմած: Աղուէսն իւր բանը շինեց:

Այսպէս շարունակ աւելացան գազանների մէջ մէկ մեծ թռչուն՝ Անկա Չմրութ անունով և մէկ էլ, կատունների թագաւոր վագրը: Աղուէսը ծառայի պէս իւր գործը կատարում էր:

Իշխանի որդին զարմանում և սարսափում էր. գազանների գազանութիւնից ս, յուզողի մէջ էր ընկնում. նոցա խաղաղ ընկերութիւնից հիանում էր: Բայց էլ քնն էր ուզում. ահա \* սքանչելի գերգաստան իւր համար. ընտանիք, բարեկամներ, ընկերներ: Մարդն այսպէս ապրել շարունակեց, և օրէցօր աւելի \* հանգստանում էր:

Որսորդն էլի որսի գնաց: Աղուէսը բոլոր գազաններին կանչեց ատեան կազմելու և խորհուրդ անելու: Գնացին բաց հրապարակ տեղ. աղուէսը մի հաստաբուն կաղնիի կոճ \* գաւա և ելաւ վրէն: Պարոն աղուէսը իւր գահի վերայ նստած՝ խրատ կարգաց նոցա, թէ իշխանի տղեն որքան բարութիւն է անում իւրեանց: «Եկէք, ասաց, այսուհետեւ նա մեր ՏԵՐԸ լինի. ծառայենք նորան \* սրտով, \* մտքով, հաւատարմութեամբ: Գազանները իւրեանց մէկ թաթիկը բարձրացուցին, թռչունն իւր մէկ թւը բաց արաւ, թէ լաւ՝ այդպէս լինի:

«Մեր տէրը, ասաց աղուէսը, մարդ է և իշխանի որդի է, նորան հարկաւոր է մէկ պատուական \* վրան կարգ ու սարքով, ո՞վ կըբերէ այս բաները»:

Ամէնքն ասացին, թէ Անկա Չմրութը թող բերէ, մենք ուրիշ բանի պէտք կու գանք: Նա յանձն առաւ, գնաց ու բերեց իւր թւերով ամենայն բան: Աղուէսը վրանը կանգնեցնել

տուէց, անկողին, կահ-կարասիք՝ զարդարեց, ուտելու խմելու բաներ պատրաստեց:

Իրիկունը տէրը դարձաւ, ամէնքը դիմաւորեցին, փառաւոր կերպով տուն բերեցին: Աղուէսը որսերը մաքրեց, մէկ մասը պղնձի մէջ եփեց որսորդի համար, \* շնորհքով սեղան շինեց, տէրը գոհութեամբ կերաւ, սիրտն էլ գողում էր: Գազաններն էլ իւրեանց բաժինը լափեցին:

Միւս առաւօտ աղուէսն էլի տուտը շարժելով գազք բարձրացաւ, ատենականները ժողովուեցան:

«Գիտէք, ասաց աղուէսը, պապերից մենք ինչ ենք լսել: Աղամը բոլոր կենդանիները զոյգ-զոյգ տեսաւ, \* Աստուծոն գանգատեց, որ ինքը միայն մէնակ է, Աստուած էլ Եւա տուեց նորան: Ե՛հ, Աստուած չի հաւանի, որ մեր տէրը մէնակ է ապրում: Մեր տիրոջ կնիկ է հարկաւոր, այն կնիկը թագաւորի աղջիկ պէտք է լինի: Գէ, բերէք այդ կնիկը»:

Մտածեցին.—Մեր խօսքը մէկ է, բայց չեն թողնի գազաններին, որ պալատի պարտիզին մօտենան:—Ելի Անկա Չմրութից խնդրեցին, որ այս էլ նա կատարէ:

Թռչունը գնաց յափշտակեց բերաւ: Թագաւորի աղջիկը սարսափելի գազանների ժողովի մէջ էր, բայց ամենքից յարգանքներ ու պատիւներ ընդունեց: Մանաւանդ պարոն աղուէսը \* քաղցր լեզուով և \* կոտորուելով \* հանգստացրեց նորան:

Այս օրը որսորդը ութ որս որսաց: \* Մտքում ասում էր, թէ ո՞վ գիտէ ինչ նոր գազան ընկերացել է: Բայց ինչ տեսաւ. իւր սիրած թագաւորի աղջկան. որքան ուրախացան երկուսն էլ:

Թագաւորը բարկացած՝ մարդիկ ուղարկեց անտառ, որ իւր աղջկան գտնեն բերեն: Աղուէսը հեռուից տեսաւ նոցա, և իսկոյն արջին ու գայլին հրամաններ տուեց: Սոքա գնացին բոլորին պատառ-պատառ արին, մէկին ողջ թողեցին, որ գնալ թագաւորին պատմէ տեսածը:

Թագաւորն ուղարկեց աւելի մարդիկ. աղուէսը առիւծին  
 և վագրին առաջ ձգեց, հրամայելով որ մէկին էլի ողջ թողնեն:  
 Թագաւորը ահագին զօրք ժողովեց: Աղուէսն էլ գահի  
 վրայ բարձրացաւ, հրամայեց գազաններին, որ ամէն մէկը  
 գնայ իւր ազգը բերէ: Միւս օրը որսորդը որ եկաւ, տեսաւ որ  
 բոլոր անտառը գազաններով լիքն է. իւր ծառաներն առաջ  
 եկան և աղուէսը հասկացրեց, թէ ինչու համար են հաւաքուել:  
 Միւս օրը թագաւորը զօրքով եկաւ, գազանները կռիւ  
 գնացին և յաղթեցին: Իրանց տիրոջ տարան քաղաք, թագա-  
 ւոր շինեցին. աղուէսը գառաւ մեծ վեզիբ, միւսներն էլ  
 նազիր վեզիր:

15. ՀԱԶԱՐԱՆ \* ԲԼԲՈՒԼ.

Մէկ թագաւոր եօթը տարի շինել տուեց մի եկեղեցի:  
 Օծեցին. թագաւորը գնաց աղօթք անելու: Մէկ էլ այնպիսի  
 բուք բարձրացաւ, որ թագաւորը քիչ մնաց պէտք է \* խեղ-  
 դուէր: Տեսաւ մէկ \* ճգնաւոր իւր առաջ կանգնած: «Թագա-  
 ւորն ապրած կենայ, ասաց \* ճգնաւորը, սիրուն եկեղեցի շի-  
 նեցիր, բայց մէկ բան պակասում է», Բուքը \* խստացաւ,  
 \* ճգնաւորը աներևոյթ եղաւ:

Թագաւորը եկեղեցին քանդել տուեց, եօթը տարի շինել  
 տուեց, առաջնից էլ աւելի սիրուն: Օծեցին. թագաւորը գնաց  
 աղօթք անելու. Բուքը բարձրացաւ: Ճգնաւորն էլի եկաւ և  
 ասաց. «Թագաւոր, ապրած կենաս, պայծառ է եկեղեցիդ,  
 բայց մէկ բան պակասում է»:

Մէկ էլ քանդել տուեց թագաւորը: «Աշխատեցէք ուղիղ  
 իննը տարի, ասաց. այնպէս շինեցէք, որ աշխարհքի երեսը  
 տեսած չըլինի նմանը»: Շինեցին, օծեցին: Թագաւորը գնաց  
 աղօթք անելու: Բուքն սկսուեցաւ. ճգնաւորն առաջև  
 \* տնկուեցաւ: «Թագաւորն ապրած լինի, ասաց, \* աննման է

քո շինած եկեղեցին, ափսոս որ մէկ բան պակաս է»: Թագա-  
 ւորը վերջապէս ճգնաւորի փողպատը բռնեց: «Մէկ ասա, տես-  
 նեմ, իմ եկեղեցու պակասութիւնն քնչ է. դու երեք ան-  
 գամ քանդել տուիր ինձ»: — Այս եկեղեցուն Հազարան \* բըլ-  
 բուլ է պէտք, որ միայն սօրան է վայել»: — Ճգնաւորն անե-  
 րևոյթ եղաւ. Թագաւորը տուն եկաւ:

Նա \* մտածեց, թէ ծերացած է ինքը. ժամի համար  
 Հազարան \* բըլբուլ է պէտք, քնչպէս երթայ բերէ:

«Մենք կ'երթանք կըբերենք, ասացին նորա Յ որդիքը:  
 Երեքն էլ ձի հեծան, գնացին: Մէկ տեղ հասան, տեսան որ  
 ճանապարհը երեք ճիւղ է, \* շուարած կանգնեցին:

Ճգնաւորը պտտահեցաւ նոցա, հարցրեց. «Ո՞ւր էք գնում,  
 \* կտրիճներ»: — Գնում ենք Հազարան բըլբուլ բերելու, չըգի-  
 տենք ո՞ր ճանապարհով գնանք:

Ճգնաւորն ասաց. «Այս լայն ճանապարհ երթացողը կը-  
 դառնայ. միջին ճանապարհ երթացողը՝ կամ դառնայ կամ չը-  
 դառնայ. ցածրի ճանապարհ երթացողը՝ յոյս չըկայ որ դառ-  
 նայ»: — Ի՞նչի, հարցրեց փոքրը: «Կ'երթաս, ասաց, մի գետ  
 կայ, Հազարան բըլբուլի տէրը նորան աղի է արել, չի \* խմուի,  
 դու պիտի խմես, ասես. Օ՞խ, անմահութեան ջուր է: Գետը  
 կ'անցնես, մէկ անտառ կու գայ, այն արել է չարփուշ. դու  
 պէտք է քաղես, հոտոտես, ասես. Օ՞խ, արքայութեան ծա-  
 դիկ է: Անտառը կ'անցնես, կըտեսնես մէկ կողմ գայլ կա-  
 պած, միւս կողմ գառն. գայլի առաջև խոտ, գառի առաջև  
 միս. պէտք է վերցնես միսը դնես գայլի առաջև, խոտը  
 գառի առաջև»:

«Կ'անցնես կ'երթաս կըհասնես մի մեծ դուռ, մէկ փեղ-  
 կը փակ, մէկ փեղկը բաց. փակ փեղկը պէտք է բանաս, բացը՝  
 փակես: Ներս կըմտնես կըտեսնես, որ Հազարան բըլբուլի տէրը  
 քնել է. եօթն օր քնում է, եօթն օր արթուն է: Թէ որ աս-  
 սածներս կարողացար կատարել, Հազարան բըլբուլը կըբերես,

ապա թէ չէ՝ ոչ կարող ես երթալ, ոչ կարող ես դառնալ։  
 Եղբայրները ձի հեծան, մեծը լայն ճանապարհով գնաց,  
 միջնակը միջին, փոքրը ցած ճանապարհը բռնեց գնաց։ Փոքրին  
 ետև ետև պատահեցան՝ դետ, անտառ, գայլ, գառն, դուռն.  
 ճգնաւորի ասածը բոլորն էլ արեց. ներս մտաւ տեսաւ որ մի  
 ջէյրան մարալ աղջիկ է պառկած։ Հազարան բլբուլը իւր վան-  
 դակից իջաւ նստեց աղջկայ սրտի վերայ՝ հազար լեզուով  
 \* ճվլլեց, \* բլբլեց։ Աղջկան քուռն էր տարել. տղէն ելաւ  
 Հազարան բլբուլը առաւ, աղջկայ երեսի վերայ էլ իւր պռուռնկ-  
 ներով մի \* նշան \* դրեց, ետ դարձաւ իւր ճանապարհը։

Աղջիկը քնից օր զարթեցաւ, տեսաւ որ բլբուլը չըկայ.  
 իմացաւ որ տարել են, գոռաց. «Գոռու, \* բռնիր»։ Գոռուն ա-  
 սաց—Աստուած նորա հետ լինի, ի՞մ բաց փեղկը փակեց, փակ  
 փեղկը բացեց։

Գոռաց. «Գայլ, գառ, բռնեցէք»։

Ասացին—Աստուած նորա հետ լինի. խոտ գառնիս տուաւ,  
 միս՝ գայլիս։

Գոռաց. «Անտառ, բռնիր»։

Ասաց—Աստուած նորա հետ լինի. դու ինձ չարփուշ  
 արեցիր, նա արքայութեան ծաղիկ արեց։

Գոռաց. «Գետ, դու բռնիր»։

Ասաց—Ինչի՞ բռնեմ, դու ինձ արեցիր դառնաղի, նա  
 արեց անմահութեան ջուր. թող գնայ, Աստուած նորա հետ  
 լինի։

Աղջիկը անձար մնաց. հեծաւ իւր ձին։ Մենք թողնենք  
 նորան իւր ձիու վերայ։

Փոքր եղբայրն եկաւ ճգնաւորի մօտ, տեսաւ եղբայրնե-  
 րին, որ ճանապարհից դարձել էին։ Հազարան բլբուլը առան  
 երեք եղբայրները միատեղ շարունակեցին ճանապարհը տուռ  
 գնալու համար։ Ծարաւեցան, հասան մի հորի բերան։ Փոքր  
 եղբօրը իջուցին, որ ջուր հանէ։ Զուրը քաշեցին, եղբօրը

թողեցին հորի մէջ։ Երկու եղբայր մէկմէկու ասացին. «Ես  
 որ մեզ հետ լինի, մեր հօր առաջև մենք թնչ երեսով երևանք»։  
 Առան Հազարան բլբուլը գնացին։ Հասան տուռը, հօրն ասա-  
 ցին. «Մեր փոքր եղբայրը սպանուեցաւ. Հազարան բլբուլը  
 մենք ճարեցինք, բերինք»։ Հազարան բլբուլը կախեցին ժա-  
 մի մէջ, իսկի ոչ ձայն ածեց ոչ շուռն։

Աղջիկն իւր ձիով հասաւ թագաւորի մօտ, ասաց. «Այն  
 \* կտրիճն ո՞վ է, որ իմ հազարան բլբուլը բերել է»։ Երկու  
 եղբայրներն ասացին. «Մենք ենք»։ Ի՞նչ տեսաք ճանապարհի  
 վերայ։ «Ոչինչ չըտեսանք»։—Գուք չէք բերողը, դուք գող  
 էք, ասաց։ Բռնեց \* բռնատուն դրեց թագաւորին էլ, երկու  
 եղբօրն էլ, ինքը տիրեց քաղաքը նստեց։ Մինչև Հազարան  
 բլբուլ բերողը չըգայ, ձեզ պատել չըկայ։

Սոքա մնան այնտեղ, մենք գնանք փոքր տղին։

Գարի քաղող կնիկներ տղին հորից հանեցին։ Մէկ պա-  
 ռաւ կին նորան հոգեղաւակ արեց։ Մի քանի շաբաթ անցաւ,  
 ձայն ձայնի ընկաւ, հասաւ մինչև տղի ականջը, թէ Հազա-  
 րան բլբուլ բերողն եկել է, տէրն էլ ետևից հասել է։ Մէկ օր  
 տղէն պառաւից հրաման առաւ, ասաց. «Երթամ քաղաք, մի  
 նոր զարմանալի ժամ են շինել, տեսնեմ»։ Գնաց իւրեանց տուն,  
 տեսաւ որ ոչ հայր կայ, ոչ եղբայրներ։ Հարցրեց. «Ո՞ւր են»։  
 Ասացին—Հազարան բլբուլի տէրն եկել է, բռնատուն է դրել։  
 Տղէն գնաց բռնատնից հանեց հօրն ու եղբայրներին։ Աղջիկն  
 ասաց. «Ես Հազարան բլբուլի տէրն եմ. դու ինձանից չե՞ս  
 վախենում»։ Տղէն ասաց.—Ես Հազարան բլբուլի բերողն եմ,  
 չեմ վախենայ։

Աղջիկը հարցրեց. «Ճանապարհի վրայ թնչ ու ինչ  
 տեսար»։

Տղէն պատմեց՝ դետ, անտառ, գայլ, խոտ, դուռ. ինչ որ  
 արել էր, ինչ որ տեսել էր։ «Թէ որ այդ բաներին չե՞ս հաւա-

տայ, երեսիդ վերայ էլ մի նշան կայ. իմ նշանածն ես դուստր  
 — Հալալ ըլի քեզ, ասաց աղջիկը:  
 Հարսանիք կազմեցին, գնացին ժամը պսակուելու: Հագա-  
 քան բլբուլը \* ճլվտալն սկսեց. հագար-հագար եղանակներով  
 ձայն հանեց, դալլալայ էր արձակում, դալլալի էր երգում:

16. ԲԻՒՐՍՊՍՏԻԿ.

Կային մէկ մարդ մէկ կնիկ: Այս մարդը շատ ժամասեր  
 էր: Ամենայն օր ժամ էր գնում, օրը մէկ գրօշ էր տալիս տէր-  
 տէրին: Տէրտէրն էլ ամենայն օր նորան ասում էր. «Օրհնած,  
 Բիւրապատիկը քեզ մէկի տեղ հագար տայ»:

Մարդն ուրախանում էր, ինքն իրան ասում էր. «Այս  
 լաւ բան է. մէկ տալիս եմ՝ հագար պէտք է առնեմ»:

Այսպէս գնալով գնալով ինչ որ ունէր տէրտէրին տուեց,  
 աղքատացաւ: Կնիկն ասաց այս մարդուն. «Վեր կաց գնա՛  
 տէրտէրին, մէկ հագարը բեր, տանք հացի-մացի, մինչև որ  
 մէկ էլ հագարներն էլ կամաց-կամաց տայ»:

Մարդը գնաց. «Օրհնեա՛ ի տէր»:  
 «Տէրտէր ջան, ես քեզ տուի, դուն ինձ հագար-հագար խոս-  
 տացար. հիմի բեր մէկ հագարը տուր տանեմ, այն մէկէլներն  
 էլ՝ յետոյ կու գամ, կրտաս»:

— Օրհնած, ասաց տէրտէրը, դուն ինձ տուիր, որ Բիւ-  
 րապատիկը քեզ մէկին հագար տայ:

«Բիւրապատիկը ո՞րն է»:

Մի ճանապարհ ցոյց տուեց: — Այս երկայն ճանապարհը  
 կրբունես, կ'երթաս. մէկ մեծ մարդ կը պատահի, որ ոսկի ա-  
 թոռի վերայ նստած է, Բիւրապատիկը նա է. ասա՛ նորան՝  
 ինձ տէրտէրն ուղարկեց, մէկ տուել եմ՝ հագար պէտք է տաս:

Մարդն այն երկայն ճանապարհը բռնեց գնաց: Պատա-  
 հեցաւ մէկ քարանձաւ, մտաւ ներս, ինչ տեսնէ. քառասուն

հոգի աժդահայ գող շարուել են. սորան պատիւ են անում,  
 տեղ են բաց անում, իւրեանց մէջ նստեցնում են: Գարձան  
 հարցրին. «Ո՞վ ես դու. այսքան ժամանակ է ահու մարդ չէր  
 եկել այս կողմը. ո՞րտեղից ես գալիս, ո՞ւր ես գնում»:

Մարդն ասաց. «Բիւրապատիկին եմ գնում՝ մէկ տուել  
 եմ, հագար պէտք է առնեմ»:

Գողերն ասացին—եղբայր, այդ խելքը խելք չէ, ականջ  
 մի դնի, արի՛ այստեղ, տանք քեզ բռով ոսկի, դարձի՛ր գնա  
 քո տունը:

«Չէ, ասաց մարդը, այդ փողը հալալ չէ»:  
 Գողերն ասացին. — Որ այդպէս է, դու արդար մարդ ես. որ գնաս, Բիւրա-  
 պատիկին հարցրու՛ մեզ համար մէկ էլ աշխարհքում տեղ  
 կայ: «Գլխիս վերայ», ասաց մարդը... գնաց:

Գնաց մէկ ծերի պատահեցաւ, որ քարի մօտ նստած էր.  
 նա անդադար ասում էր. «Փառք քեզ Աստուած, Փառք քեզ  
 Աստուած»: Քանի ասում էր՝ քարից միշտ ոսկի էր \* բղխում:

Ծերը հարցրեց այս մարդուն. «եղբայր, ո՞ւր ես գնում»:  
 Ասաց. «Գնում եմ Բիւրապատիկին՝ մէկ տուել եմ, հագար  
 պէտք է առնեմ»:

Ծերն ասաց. «Արի՛ այս ոսկուց երկու ափ տամ, առ  
 տուն դարձի՛ր»:

«Չէ, ասաց մարդը, այդ ոչ իմ տուածն է, ոչ իմ վաս-  
 տակածն է, ինձ հալալ չէ»:

Ծերն ասաց. «Որ այդպէս է, երբ Բիւրապատիկին գնաս՝  
 հարցրու, թէ ոսկին երբ պէտք է \* կտրուի այս քարից»:  
 — Աչքիս վերայ, ասաց մարդն ու գնաց:

Գնաց ճանապարհի վերայ տեսաւ մէկ այգետէր. նա  
 հարցրեց. «Հողածին, ո՞ւր ես գնում»:  
 Մարդն ասաց. «Գնում եմ Բիւրապատիկին՝ մէկ տուել եմ, հագար առնեմ»:  
 Այգե-  
 տէրն ասաց. — Կ'երթաս՝ հարցրու Բիւրապատիկին, ինչու իմ  
 այգու պատը որ քաշում եմ՝ կանաչ \* պտուղներն ամենքը

չորանում են, պատր որ քանդում եմ կանաչում են: «Երե-  
սիս վերայ», ասաց մարդն ու զնաց:

Գնաց տեսաւ, որ մէկ տէրտէրի միջքի վերայ պատ է  
շարած, մէջը տրնքտրնքում է: Տէրտէրը հարցրեց ասաց. «Որ-  
դի, ո՞ւր ես գնում»: Մարդն ասաց. — Գնում եմ Բիւրապատի-  
կին՝ մէկ տուել եմ, հազար պէտք է ստանամ:

Տէրտէրն ասաց. «Դնա Բիւրապատիկին հարցրու. ես այս  
պատից երբ պէտք է ազատուիմ»: — Լաւ կ'ըլի, ասաց մարդն  
ու զնաց:

Գնաց տեսաւ, որ մէկ մեծ մարդ ոսկի աթոռի վերայ  
նստած է. նա հարցրեց. «Ո՞ւր ես գնում»:

Մարդն ասաց. «Բիւրապատիկը դու ես»:

Ասաց. — Հայ ես եմ. թնչ ես ուզում:

Ասաց. «Մեր տէրտէրն ինձ ուղարկեց: Ես քեզ մէկ  
տուել եմ, դու ինձ հազար պէտք է տաս»:

Բիւրապատիկն ասաց. — Կ'երթաս \* տունդ, բակիդ մէջ  
\* թթի ծառ կայ, նորա տակը փորիք, մի կարաս լիք ոսկի  
դուրս կու գայ, վեր առ քո մէկի տեղ հազար հազարանոց:

Էն մարդը ամէն \* ապսպրածներն էլ ասաց Բիւրապա-  
տիկին. ամենի պատասխանն առաւ դարձաւ:

Եկաւ, պատի մէջի տէրտէրին ասաց. «Երբ որ \* Աստծուն  
մեղայ գաս, այդտեղից կ'ազատուես»: Տէրտէրն ասաց. — Ես  
թնչպէս մեղայ գամ Աստծուն: Խօսքը բերանից հանեց ու  
մէկէցմէկ պատով-մատով զնաց գետնի տակ:

Մարդը զնաց այգետիրոջ հասաւ. ասաց. «Այգուդ պա-  
տերը քանդիր, որ անցուդարձ անողն ուտի, այգիդ կրկա-  
նաչի»: Դեռ խօսքը բերանն էր, տէրը զնաց պատերը քան-  
դեց, այգին կանաչեց:

Մարդն անցաւ, զնաց ծերուկի մօտ. ասաց. «Քանի քո  
բերանից Աստուած չես պակսեցնիլ, քարից ոսկին չի պակասիլ»:  
Ծերն ասաց. — Մթթէ մարդ իւր բերանից Աստուած կը պակ

սեցնէ. փառք Աստուծոյ: Ասաց չ'ասաց, քարի մէկէլ երե-  
սից էլ ոսկի \* բղխեց՝ առաջնից էլ շատ:

Մարդն եկաւ գողերի քարանձաւի մէջ. գողերին ասաց.  
«Թէ որ ձեր գողութիւնը թողնէք, այն մէկ էլ աշխարհքում  
ձեզ տեղ կայ»: Գողերը թող տուեցին իւրեանց քարափի փո-  
սը, զնացին իւրեանց մեղքը լացին, փրկուեցան:

Վերջապէս մարդն եկաւ իւրեանց տուն. \* կնկան կանչեց,  
ասաց. «Կնիկ, բահ ու փէտատ բեր»: Առան բահն ու փէտա-  
տը, \* թթի ծառի տակ փորեցին, մի կարաս լիք ոսկի գտան:  
Իրիկունը \* մթնեցաւ, կարասը թողեցին առաւօտուն հանել:  
Գիշերը հարեաններն իմացան, եկան որ կարասը գողանան  
տաննն. տեսան որ գեղին հող է մէջը, վեր առան կարասը  
շուռ տուեցին այն մարդու այգու վերայ. կարասը կոտրուե-  
ցաւ, հողը ցրուեցաւ: Առաւօտեան զարթեցան, թնչ տեսան.  
այգու չորս կողմը ոսկի է \* փռուել: Երիկը գոռաց. «Քն  
կնիկ, ցախ աւելը բեր. բոլոր այգին ոսկի է բուսել»: Աւե-  
լեցին կօլօն կօլօն ոսկիք, մէկի տեղ հազար չէ՝ անդար հա-  
զար առան, \* հարստացան, Աստծուն փառք տուին:

17. ՄՕՐ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ ՈՐԳՈՒՆ.

Իմ արմաղան որդի.

Ես քանի տարի է մեզ մոռացել ես: Քեզ մնալով՝ մեր  
աչքը ջուր \* կտրուեցաւ. մեր հոգին հալուեցաւ քս ճամ-  
բուդ վրայ: Մեզ \* մտքից հանեցիր, մեզ սպանեցիր:

Դու չես գիտի, իմ հոգու կտոր, որ քեզ կարօտել ենք.  
քո սիրով մենք մաշուել ենք, սիրուն որդի, երբ պիտի գաս:  
Ուզում ես գաս, որ մեր գերեզմանը տեսնես, դուն էլ մեր  
երեսին կարօտ մնաս, մաշուես ու \* մղկտաս:

Իմ թափած արտասունքները մտքիդ չէ՛ գալիս, որ գի-  
շեր ցերեկ քեզ համար գերի էի ու մեռած: Կ'ուզէի որ դու

\* զուարթ լինիս, իմ վարդ, ծլես ծաղկես. հա, էս էր իմ սրտի բանը, արևուզ մեռնեմ, որդի:

Ես կրնստէի քո օրօրոցին, քեզ մեղրից անուշ կաթ կու տայի, որ դու ուտէիր, քաղցր քուն քաշէիր, զօրանայիր, որ իմ լացը \* սրբէիր: Իմ անմահական որդի, ես քեզ էս օրօրը կ'ասէի.

Քեզ զնեմ ոսկի օրօրոց,  
Վրէդ քաշեմ \* մարգրտէ ծածկոց,  
Հուսով \* քնես, բարով զարթնես,  
Իմ վարդ որդի, քեզ մատաղ ես:  
Քեզ շատ օր օր, տա՛ր, տա՛ր ասեմ,  
Բացուես, իմ վարդ, քեզ մեռնեմ,  
Օրօր, իմ վարդ, ու նանիկ,  
Դադուած է շատ քո մերիկ:

Տեսա՛ր բալէս, տեսա՛ր քեզ ինչ անուշ խաղեր եմ ասել, որ դու անուշ քնէիր. քեզ կաթ ու մեղր եմ տուել, որ ուտէիր զօրանայիր, իմ ցաւիս դեղ ու դարման լինէիր: Քո մէկ \* ժըպտալը ինձ սիրտ էր տալիս, քո մէկ ծիծաղը՝ ինձ կեանք էր տալիս: Ախ, էստունք ինչք մոռացար: Հէրիք է, որդի, արեդուն զարիբութեան, մենք կարօտութեան մէջ խորովում ենք. դու ուրիշին աչք մի տար, ուրիշի աչքը մեզ լոյս չի տայ: Քո նազելի տեսին կարօտ՝

քո պառաւ մէր  
Շուշան:

Նոր տարու երկուշաբթի  
Վ.:

II

Հարիւր նախապատրաստութիւններ անելուց  
յետոյ

ԿԱՐԴԱԼՈՒ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

1. ձԵՆՃՂՈՒԿ.

Սա փրօւեց ցորեն կրտուրի վերայ: Տորենը ճշ ճղուկի կերակուր է: Ճընճղուկը կերաւ ցորեն: Նորան սպանեցին քարով: Նորան մորթեցին, եփեցին: Ճընճղուկ — ծխա: Ծխան ինչ է, թէ իւր եղն ինչ ըլի: Բայց շատ մեծ Բազմութիւն կերակրուեցաւ այդ կերակրով: Ահա այսպիսի ճաշին կ'ստեն, թէ ճընճղուկը ուղտ շինեցին: Ռեան ու զըզիրն էլ հասան ճաշին: Ռեսի

զըլխին լոյս է թափել, ո՞վ է տեսել — զըզիրը  
Գըզրի բերանին պարկ է կախ արած, որով-  
հետև ամեն տեղից մի բան շահվում է, պարկն  
է դնում, տուն է տանում: Ռէսի ձեռին գա-  
ւազան կայ:

Մենք ասում ենք՝ բեօխուայ, Վասպուրա-  
կանի և Տարօնի կողմն ասում են՝ ուէս: Վա-  
նեցին՝ Վասպուրականցի է, Մշեցին՝ Տարօնեցի  
է: Աղթամարը Վասպուրականումն է, Սուրբ  
Վարապետը Տարօնումն է: Սյս ժողովուրդը  
ուրախ զուարթ է:

Նորա ասում են՝ Օրը կերթայ, ատուր շառը  
չերթայ: Մենք ասում ենք՝ Բանն արա, զուար-  
թացիր: Մենք ինչ ոսկէ պողեր ունինք, որ  
մշակների վերայ ծիծաղում ենք:

2. Ա.Բ.Ա.Ղ.Ա.Ղ.

Վուկուկուկու արագաղ. կարմիր կատար  
թագ ու պասկ. կարմիր կանաչ արբէշում, ար-  
բէշում չէ՝ մետաքս է: Չիր ու չամիչ՝ հարս ու  
փեսին: Եփած կուրկոտ՝ գող սև կատուին:  
Վատուն կերաւ, մայրը սրգաց:

Վուկուկուկու՝ իմացէք, արագաղի աղաղակ:

Սնձրև օրը հաւերուն ջուր ատուղ շատ կըլի:  
Հին հաւերին ըրչայ-ըրչայ, նոր հաւերին ջու-  
ջուջու: Մեր տուն՝ կուտ է ուտում, հարևանի  
տուն՝ ձու է սածում:

Հանելուկ, համմանելուկ,  
Ծերը ծաղիկ, տակն աւելուկ:

Էն զատը ինչ զատոց է, գլխի թագը  
սրղոց է, գիշերուան մեռելյարոյց է: — Քրիս-  
տոս յարեաւ ի մեռելոց:

3. Ա.Բ.Գ.Ա.Կ.

Պրատիկ աստանէն քնից զարթնեց, տեսաւ  
մուլթն է, լոյս չըկայ: Սասց. «Ինչ ծոյլ զատ  
ես, արեգակ, քանի՞ քրնես, ինչի՞ չես զարթ-  
նում»: — Արեգակը չըլսեց: «Մուկը, այն պրա-  
տիկ մուկը, փախցրեց ոսկէ բլիթը. դէ, արե-  
գակ, չես իմանում»: — Արեգակը էլի չըլսեց:

«Վատուն ետեից վաղեց, կատուից հեշա  
չես պրծնիլ. նա որ գոմչի ոտը կտարեց, նորա  
ճանկից դու ինչպէս պէտք է խըլես ոսկէ  
բլիթը»: — Արեգակը այս էլ չըլսեց:

«Թայլի գլխին աւետարան կարդացին, լսող  
չեղաւ. արեգակ, այսքան էլ բուն կըլի»: Երբ

որ արեգակը դուրս եկաւ, մանուկն ասաց.  
«Ես իմն արեցի, քեզ դուրս հանեցի. հիմի  
դուն գնա՛ եղբորդ գրտիր, դարդըս ի՞նչ է»:

Արեգակը լուսաւորում է մեծ արարած աշ-  
խարհքը: Ի՞նչպէս իմանայ, թէ ճանճի կտոր  
սատանան ի՞նչ է փրնթփրնթում:

Արե, արե, եկ, եկ,  
Զիգի քարին վեր եկ,  
Մեր ոչխարին յըտիկ արա,  
Որ գալը գալ իմաց արա:

4. ԱՌԱՒՕՏ.

Ես ծոյլ, գու աշխատաւոր. ես քրնեմ, դու  
վեր կաց: Լաւ օրն առաւօտուանից, լաւ տա-  
րին գարունքուանից: Վախտը վախտին, թէ չէ  
ժամանակն անց է կենում: Խօսքը վաղ վեր կե-  
նայր չէ, Աստրծու յաջողելն է):

Լուսաւորչի վառած կանթեղը զեռ չէ  
հանգել, նա երկընթումն է՝ Մասիսի գրլխին:  
Առաւօտեան լոյսը առաջ Մասիսի գլուխն է  
լուսաւորում, յետոյ այն մարդկանց, որոնք այդ  
տեսնում են: Քրիստոսին շատերը չըտեսան,  
բայց հաւատացին: Մեր Արգար թագաւորը  
Նորան չէր տեսել, բայց ամենից առաջ նա  
հաւատաց:

Արգարի հաւատը, Լուսաւորչի լոյսը, մեր  
շնորհքը:

Ով ալարի, ոչ դալարի:

Առաւօտ, կէս օր, երեկոյ, գիշեր: Յերեկ  
ու գիշեր: Արեգակ—լուսին ու աստղեր:

Բարի լոյս քեզ առուտեհան,  
Զեռիս ունիմ զազլէ չուան,  
Թէ չըկապեմ խուրճը քըսան,  
Գօտիկս ունիմ հետը կըցան:

5. ԳՈՅՐԵՒ ԵՂԲԱՅՐ.  
Եղբայրն ասաց՝ քոյր չունիմ, քոյրն ասաց՝  
իմ եղբոր արև: Քոյրը տան մէջ շատ զործ  
ունի. նա պէտք է տունը զարդարէ, մաքրէ,  
ալէ, նա պէտք է կերակուր եփէ, լուաց ք  
անէ, նա պէտք է կար անէ, հիւանդին ինամէ:

Եղբայրն անհող դուրսը խաղում է, նա ամե-  
նիցն աւելի սիրելի է. քոյրը նորան «Զան» է  
ասում, նորան մատաղ է դառնում:

Եղբայր, դու մեծացիր, ես քեզ մատաղ.  
երբ մեծանաս, դու ինձ տէր տիրական: Մայր,  
եւ լաւ եմ թէ քոյրս: Որդի, որ մատըս որ  
կտրեմ՝ կըցաւի. դու իմ շէկքն ես, նա իմ  
շնորհքը:

Երկուշաբթի՝ հաց կըթխեմ,  
 Երեքշաբթի՝ լօջ կըծալեմ,  
 Չորեքշաբթի՝ լուացք կ'անեմ,  
 Հինգշաբթի՝ կարկտան կ'անեմ,  
 Ուրբաթ օր՝ զուգարս կ'անեմ,  
 Շաբաթ օր՝ ժամ կ'երթամ,  
 Կիրակի՝ խորած խեխդած,  
 Ո՞վ է բանում, որ ես բանեմ:

6. ՈՒՃՈՎ, ԿԱՏՈՒ.

Աշխարհքում ամենքը թշնամիք ունին:  
 Գնացին մոծակի մօտ գանգատեցան: Մոծակն  
 է դատաւոր: \*  
 Շունը գանգատեցաւ բաղից: «Քեզ համար  
 ձար չ'ունիմ, ասաց մոծակը: Բըզի գլխին բը-  
 սընցքով սայ չի ընիլ»:— Հապա ինձ ի՞նչ կը-  
 հրամայես, հարցրեց բաղը դատաւորին. արե-  
 գակն ինձ այրում է: «Վայ, բաղն ու արեի  
 գօրութիւն չիմացող, զարմացած կանչեց մո-  
 ծակը. բա կ'ուզես, որ արեգակ չ'ըլի ու սառչես:  
 Էնզուր էլ ասած է, թէ սառած օձը առաջ տա-  
 քացնողին կըկրծէ»:

Եկաւ արեգակը գանգատեց ամպից, ամպը  
 անձրեւի վերայ, անձրեւը խոտի վերայ: Մոծա-  
 կըն այս անգամ շատ շփոթուեցաւ և ասաց.

«Արեգակ, ամպ ու անձրեւ, դուք երկնքի բա-  
 ներ էք, գնացէք ձեր ցաւը Աստուծուն յայտ-  
 նեցէք. ես իմ պրստիկ տեղովըս ուզում եմ ո-  
 տրս մեկնել իմ Եօրդանի չափով. երկինքն այն-  
 քան հեռու է ինձանից, որ չեմ էլ տեսնում»:  
 Անձարացած արեգակն էլի եփ տուեց ծովը՝  
 շինեց ամպ, ամպն էլ քամուեցաւ, դառաւ  
 անձրեւ: \*

\* Հիմի եկան խոտը, գառն ու գայլը և իւ-  
 րեանց ցան ասացին: Մոծակն աւելի նեղն  
 ընկաւ և չէր իմանում, թէ ինչ անի: Մարդուն  
 տեսաւ և ասաց. «Ասում են, թէ դու ամենից  
 խելօք արարածն ես աշխարհքում. դէ՛հ, եթէ  
 շորհք ունիս, այս երեքին մտղէ կամուրջով  
 այնպէս մէկմէկ անցկացրու, որ միմեանց  
 չ'ուտեն: Սոցա էլ այսպէս գըլխից հեռացրուց:

Եկաւ շունը պառաւից գանգատեց: Մո-  
 ծակը շատ չըլըսեց և ասաց, թէ կամ հաւա-  
 տարմութիւնդ է պակսել կամ գող ես: Շունն  
 էլ ձայնը կարեց ու ամօթից իւր պոչը կախ  
 գցեց և հեռացաւ: \*

Եկաւ պառաւը. մոծակն իմացաւ, թէ նո-  
 րա քանդողն ով է, ասաց. «Գիտեմ, գիտեմ,  
 մարիկ, թէ ո՞վ է իստակում հացերդ և մուր-

տառում կարասդ: Մուկը պրատիկ ու չըստիկ է. մէկին որ սպանես, տեղը հազար է բուսնում: Ի ու գնա էլի քո ականատը սարքէ, ես կատուի հետ խորհուրդ կանեմ, յոյսդ Սատոն վերայ դիր, կարելի է մի ճար գտնենք»: Պառաւին էլ այսպէս ցանեց: X

Այսքան երևելի գործեր կատարելուց յետոյ՝ մոծակն ուզում էր փոքր ինչ հանգստանալ. մէկ էլ տեսաւ, մուկը վազելով գալիս էր: «Մուկ, մուկ, քեզ շատ են գովում, կանգնիր, մի ասա, դու ես ուժով, թէ ես»:—Հալա կատուից ինձ ազատիր, նա իմ ետեից է ընկել, յետոյ կըխօսենք, ասաց մուկն ու փախաւ:

Կատուն էլ կատաղած հասաւ, բայց ուշ: «Մոծակ, իմ ոտի փշերը տեսնում ես, ասաց կատուն, ո՞ւր թախ կացրիր մկան»: Մոծակը տեսաւ, որ այս գազանի համար համով դատաստան չըկայ, վեր կացաւ իւր թախտից և բրզբրզալով պտուտ եկաւ: «Հալա մի խօսենք, փրշիկ, յետոյ փուշերդ սրէ. հայրդ լաւ է, թէ մայրդ»: X Կատուն ասաց. նա՛՛, նա՛՛—կատուն ասաց. ո՛չ նա, ո՛չ նա: «Ինչո՞ւ, փրշիկ, աչքերդ չես հեռացնում ինձանից, կուզես ճանկել ինձ: Կատուն ասաց. մեա՞ն, մեա՞ն—կատուն ասաց. այո՛, այո՛:

Մոծակը մէկ էլ բրզբրզաց ու մտաւ կատուի ականջը. խայթեց, խայթեց, այնքան խայթեց, մինչև որ կատուի հոգին հանեց:

Մկներն էլ իւրեանց հարսանիքն սկսեցին, չալաւանդ խաղացին: Վայ խեղճ պառաւին: X

7. ԱԻԱԳ ՄՐԿՆԻԿ.

X Լաչաք ծածկողը աւագ է. խաթունները լաչաք ունին: Աւագ մրկնիկ, խաթուն մրկնիկ: Խաթունը գրնաց էրիկ ուզելու: «Աստուած յաջողի», ասացին ամենքը, «բախտաւոր լինիս», ասացին: Բախտը բերաւ, լաւ մարդ գրտաւ: «Շնորհաւոր, աչքըդ լոյս», ասացին: Կինը տանտիկին էր, մարդը տանուտէր էր: Մարդը գաղում էր, կինը կառավարում էր: X X

X Յանկարծ խաթունը—ճժտիկ-վժտիկ. արեգակը սեւացաւ, ամենքը սրզուորեցան: Մէկն եղաւ կատար կըտրիկ-մոխրաչափիկ, մէկը—թեւաթափիկ, մէկը—ճըզակըտոր, մէկը—գըլոր-մըլոր, մէկը—բըրոր-մրոր, մէկը—կըթոց շըրջիկ, հովիւր նախիրն անտէր թողեց, մարին մխիթարելու գրնաց: X  
 էլ ո՞վ մընաց, որ չըմըղկրտաց: Մարին մըղկաց, թաղեց մըկան, մեր աւագ մըկան:

էն հանաքին ինչ ասեմ, որ կէսը զորթ  
չէ: Մուկը ծակ չէր մըսնում, ցախ անին էր  
պոչիցը կապեցին: Մուկը մեռաւ— աշխարհք  
սրգաց, այ բան:

Աատուի խրոխրուան, մկան հողեհան-  
գիսան է: ✕

8. ՄԱՐԴ ՈՒ ԿԸՆԿԱՅ ՍԷՐ.

Ուր սէր կայ, այնտեղ խոսվութիւն և  
կռիւ չըկայ: Այս ինչ սէր է, մէկն ուզում է  
կոմբալ դառնայ, ծեծել, միւսն ուզում է զանակ  
դառնայ, կրտրել: Մէկը միւսին ուզում է սպա-  
նել, մահն ընկերովի հարսանիք է: Մէկը մա-  
ծուն է շինում, միւսն ուտում է, մէկ ձեռով  
ձափ տալ չէ ըլիլ: 4

Երիկը դառաւ բրուան կատու, ձուլթ-ձուլթ  
խաղող, կարմիր գինի, թեթ թունդ քացախ:  
Կնիկը դառաւ կաղնի կոմբալ, սուր-սուր դա-  
նակ, սարխոշ Մայրո:

Բրուան կատու—խոշոր ծեր կատու: Ձուլթ-  
ձուլթ խաղող—այգի: Կարմիր գինի—կարաս:  
Թեթ թունդ քացախ—չիրախանայ: Կաղնի  
կոմբալ—անտառ: Սուր-սուր զանակ—զարբնի  
շինած: Մայրո—Մարիամ:

Երբ որ երիկը քացխեցաւ, կինը ձաբեցաւ,  
մոռնջ կացաւ: ✕

9. ԾԵԾՈՒՍԾ ԳՍՈՆԻԿ.

Գառնիկ, մէկ էլ պատմիր գըլխիդ եկածը.  
պատմիր, ոչինչ մի պակսեցնիլ:

«Ես գընացի ծառի տակը արածելու: Տե-  
«այ լաւ կանաչ խոտ ուտելու: Իէմըս կանգ-  
նեց մի պառաւ կին: Ճիպօտ ունէր նա իւր  
«ձեռքին: Փիս կընիկը ինձ ծեծեց, ծեծեց որ  
«հեռանամ: Ոտիկներըս կնտրրտեց: Խիստ ցա-  
«ւեցան ոտիկներս, ես չըկարողացայ լացըս պա-  
«սել: Խիստ ծեծ կերայ, ես լաց եղայ»:

Ոչխարը գլուխը շարժեց, նեղացաւ: Մըտ-  
քումն ասաց. «Նա մեր միսն է ուտում, մեր  
եղն ու պանիրն է վայելում, մեր կաթն է խը-  
մում, մեր բուրդն է գըրզում... Ո՞վ գիտէ, գուցէ  
վաղը ինձ էլ մորթէ: Այսքան բարութիւն որ  
անում եմ, իմ գառնիկիս ինչի՞ չէ խնայում»:  
Ելի պառանն եկաւ սորան էլ, իւր գառնիկին  
էլ ճիպօտով քըշեց:)

«Է՛հ, ասաց մայրը, գընանք, որդի, մարդիկ  
ոչ արդարութիւն գիտեն, ոչ երախտագիտու-  
թիւն ունին»: Գընացին, հեռացան: Թ

10. ԱՂՈՒԷՍԻ ԹԻՔԵՆ.

Իտեղճ աղուէսը վաղուց մի թիբայ բերան չէր զրրել: Ծով պահող ճրգնաւորի պէս ման էր գալիս, ամենքի մեղքն էր գալիս: Մէկ էլ տեսնես, նա կանգնեց մի տեղ, դունչը սրեց: «Էս մէկ, ասաց, երկու, երեք», և փրնթփրնթաց մինչև տասն ու մէկ: Յետոյ մըտքումն ասաց, «ի՛նչ չաղեր են... վիզը, սիրուն վիզը»: Բայց չըմտեցաւ, աղուէսն ու չըմտենայ, այ գարմանալի բան:

Պառաւր գնաց բուրդ բերեց գրգելու: Գրճ, գրճ, գրճ արեց ու տեսաւ, որ աղբի տակից ինչ որ քրչփորում է: Կանչեց. «Հափսա»: Հափսի ձայնով այնպէս լուսթիւն տիրեց աղբըսխանումը, որ ձանձն անցկենար՝ կըլսուէր:

Գրճ, գրճ, գրճ... պառաւն իւր բանին էր: Մէկ էլ տեսաւ, չաւր ինչ որ շփոթ հանեց: Պառաւն ասաց. «Երանի, ի՛նչ է փորացաւդ, որ կըրկրում ես»: Հան իւր կըրկրոցը չըզաղարեցրեց: Պառաւը ոտքի կանգնեց. «Մէկ, երկու, երեք... տաս. էլի մէկ, երկու, երեք... տաս». մէկ խօսքով, քանի համարեց, տասն էր համարում: «Տղէքք, հարայ

տուեց պառաւը, գայլը մէկ վառիկ է փախցրել, գնացէք, շուտ»:

Իտեղճ գայլի անունն է կոտրած, աղուէսը աշխարհք քանդեց:

Աղուէսին հարցըրին. գայլին խօ չե՞ս տեսել: «Ի՛նչպէս չէ, ասաց, զընչին մէկ վառիկ ունէր, ճամփի այն երեսով գընաց»: Այսպէս իւր գըլխից հեռացրեց նոցա, ինքը մարսեց և այս խաղերն ասաց:

Ա.	Մէկ երկու տասն ու մէկ.	Սատուած ողորմի այն պառաւի (հոգուն,
	Տասն ու մէկը ո՞վ ասաց.	Որ կընըստէր չորեք ճամփին,
	Տասն ու մէկը ես ասի,	Լիզըր գըզեր, լիզըր մաներ,
	Թէ չես հաւտայ, համրէ տես:	Լիզըր խճուճը իստակէր:

11. ՄՈՆԹ.

Մոնթը շատ երազ էր տեսնում. երազում տեսնում էր արքայութիւն: Մէկ օր էլ գընաց, ասաց, թէ արքայութեան դուռը բացէք, մըտնեմ: Հրեշտակը հարցրեց, թէ ի՛նչ լաւութիւն ես արել: «Լաւութիւն շատ եմ արել, ասաց. պատ ու ծով պահել եմ, աղքատին ողորմութիւն եմ տուել, եկեղեցի եմ շինել»: Շատ ուրախացան հրեշտակները:

Ասացին, արի փորձենք բեզ: Անցկացիր այս մազէ կամուրջը, մի վարդ կրտորիք բեր մեզ. քանի որ հարայ տան՝ տարան, տարան, դու ահանջ չըղընես և յետ մըտիկ չըտաս: «Տէրը ձեզ բարի, ասաց մոնթն ուրախացած, սորանից էլ հեշտ բան կըլի»:

Ինչաց, վարդ կրտրեց, բայց ի՞նչ հրաշալի պարտէզ տեսաւ. սիրտն ուզեց, որ մնայ այնտեղ:

Նա յետ եկաւ, յետեից՝ տարան, տարան, գողացին: Շատ պընդեց սիրտը, բայց զուր, մէկ էլ յետ նայեց, և այնժամանակ արեգակը խուարեցաւ:

«Է՛հ, ասացին նորան, բեզ համար արքայութիւն չըկայ»:— Ի՞նչպէս թէ չըկայ, սիրտը կոտրած պատասխանեց մոնթը. հանեց ջիբից սաղմոս, աւետարան, ժամագիրք, և ասաց.— Տեսէ՛ք, կարդալով մաշել եմ: «Սըրտումը պէտք է դրել էիր, ասացին, չէ թէ ջիբումը»:

Մոնթը զարթեցաւ, տեսաւ, որ իւր տեսածն երազ էր: Այն օրը շուարած միշտ կըրկնում էր. «Սըրտումն ի՞նչպէս պահեմ այս զըրքերը. մէկ չէ, երկու չէ, երեք է»: Մին էլ մի ձայն լսեց սար ու ձորից. «Ուղտն ասաց

բեանդրրբազութիւն գիտեմ. նորան պատասխանեցին՝ քո բեանդրրբազութիւնը մազէ կարմնջի վրէն կ'երևայ»:

Մոնթի դարդերը յետ ասելու համար՝ ամառուայ օրեր պէտք է լինին և ձըմեռուայ դիշերներ:— Սուտ «մեղին», սուտ «թողութիւն»: Ուշ ըլի, նուշ ըլի:

Մտայ ի տեղս ի գերեզման,  
Անխօսիլ, անխոստովանիլ,  
Անմահ մեռել եմ,  
Անգերեզման թաղուել եմ.  
Անթառամ պըսակի,  
Լուսեղէն դըրախտի  
Արժանանայ:

12. ԱՆԻԵԼ.Ք ՄԱՐԿ.

Այսպիսի անխելք մարդուն կ'ասեն. Խօսքը հարստութիւնը չէ, խօսքը կառավարելն է: Նա միայն ուտում էր և ծոյլ էր: Երևի միշտ ասում էր. «Ուտեմ տիտեմ. նունում նանամ»: Հարստութիւնն ասաց. «Պուաս խօմ չեմ, մէկ էլ դուրս գամ»: Հարստութիւնը՝ անխելքի գանձանակն է: Ով տուն չէ շինել, տըները բրտնովի գիտէ:

Տուտուց, տուտուց,  
Կարմիր կրտուց,  
Համ պատուց  
Համ ուտուց:

Այսուհետև կրկարդանք պատմութիւնը:

Նշատեց՝ ունի երկու ձայնաւոր՝ շ և բայց միշտ գրուած են մէկ է ձայնաւորով: Այսպէս բառեր շատ կան:

Ա.            Բ.            Գ.  
նշատեց. նստեց. \*նստեց. \*)

նշատեց, գլխին, խրտնել, գնայ, գտնես, փնտուց, բարձր-նստեց, գլխին, խրտնել, գնայ, գտնես, փնտուց, բարձր.

ծռած, բռնեց, գանձանակս, նմուշ, պտղով, լցուկ, նշմարեց, ծռած, բռնեց, գանձանակս, նմուշ, պտղով, լցուկ, նշմարեց.

բհամ, հարստութիւն, տուեց, ապսպրած, աղջկան, ջրի. բհամ, հարստութիւն, տուեց, ապսպրած, աղջկան, ջրի.

\* նստեց, \* գլխին, \* խրտնել, \* գնայ, \* գտնես, \* փնտուց, \* բարձր, \* ծռած, \* բռնեց, \* գանձանակս, \* նմուշ, \* պտղով, \* լցուկ, \* նշմարեց, \* բհամ, \* հարստութիւն, \* տուեց, \* ապսպրած, \* աղջկան, \* ջրի:

\*) Այսուհետև առանձին լինելու հատուածներ էլ չի առաջարկուում այլ մանուկները պէտք է կարգան նոյնինքն պարտաւորութիւնները ամբողջութեամբ: Բայց որովհետև կիսավանկերին (զեղչուած շ) գեղ սովոր չեն, ուստի այստեղ միքանի վարժութիւններ է բերուած այդ նպատակով: Աստղանիշ բառերը թէ այստեղ և թէ պատմութեան մէջ կիսավանկեր ունին:—Առաջարկուած վարժութիւններից Ա-ը պարունակուած է ամբողջ բառեր կիսավանկ շ-երով, Բ-ը՝ նոյն բառերը վանկերի բաժանած, բայց առանց շ-երի, Գ-ը՝ նոյն բառերն անբաժան և առանց շ-երի:

Համբերութիւնը կեանք է: Աստուած հալալին կրտայ: Ամէն բանի վերջն է գովելի: Մարդ՝ մարդու քահանայ. մարդ՝ մարդու սատանայ: Ամպ օրը գայլը կ'ուրախանայ: Ոչով չասի, թէ իր ճրագը մինչև ատուտ լոյս կրտայ:

Տղի, կնկայ, աննման, աղջկայ, փրփրացրեց, լցրեց, տղի, կնկայ, աննման, աղջկայ, փրփրացրեց, լցրեց.

լուացուեցաւ, պսակի, տուեց, հօրս, խփել, ճղների. լուացուեցաւ, պսակի, տուեց, հօրս, խփել, ճղների.

խմես, գտած, պսակ, վրէն, մօրս, հանգստանալ, փախցնել. խմես, գտած, պսակ, վրէն, մօրս, հանգստանալ, փախցնել.

սըբել, հովուին, կտարտեց, դռներ, դռան, կշտին, մշակներ. սըբել, հովուին, կտարտեց, դռներ, դռան, կշտին, մշակներ.

բռնէ, փնտուելու, թռցրեցին.  
բռնէ, փնտուել լու, թռցրեցին.

\* Տղի, \* կնկայ, \* աննման, \* աղջկայ, \* փրփրացրեց, \* լցրեց, \* լուացուեցաւ, \* պսակի, \* տուեց, \* հօրս, \* խփել, \* ճղների, \* խմես, \* գտած, \* պսակ, \* վրէն, \* մօրս, \* հանգստանալ, \* փախցնել, \* սըբել, \* հովուին, \* կտարտեց, \* դռներ, \* դռան, \* կշտին, \* մշակներ, \* բռնէ, \* փնտուելու, \* թռցրեցին:

14. ԳԱԶԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Ամէն բանին աէր կ'ուզէ, ամէն բանը թաղով պէտք է պրսակուի: Թագաւորն էլ թագի լայաղ պրտի: Ինչ կըցանես, այն կը-

Տրնձեա: Եները իրար հետ կրովում են, գայլի դէմը միանում են: Սէրը սիրով կրլինի, քաշ քաշելով բան չի դառնալ:

Տըռեցին, տընից, բռնեց, շնորհք, մտքում, շքանչելի. տ-ուեցին, տ-նից, բռ-նեց, շ-նորհք, մտ-քում, ս-քան-չե-լի.

Հանգըստանում, խըրատ, սըրտով, վըրան, Աստըծուն, քաղցըր. հան-գս-տա-նում, խ-րատ, սր-տով, վ-րանի Ա-ս-տ-ծուն, քաղ-ցըր.

կոտըրտուելով, հանգըստացրեց.

կո-տրտ-ու-ե-լով, հան-գս-տաց-րեց.

\* Տուեցին, \* տնից, \* բռնեց, \* շնորհք, \* մտքում, \* սքանչելի, \* հանգստանում, \* խրատ, \* սրտով, \* վրան, \* Աստծուն, \* քաղցըր, \* կոտրտուելով, \* հանգստացրեց:

15. ՀԱԶԱՐԱՆ ԲԼԻՈՒ.

Եօթը եկեղեցի էլ որ շինես, դեռ էլի վարձքիդ չես հասնիլ: Աստուած շատ ու բըշին չի նայում, սրբաի միջին է նայում: Սիրտը ճրրագ չէ, որ լոյս տայ, Աստըծուն է յայտնի: Աշխարհքը կրտրձինն է, վարձքը արժանաւորինն է: Բըլբուլը իւր դարդը կուլայ, ագուար դար դար կ'անէ:

Բըլբուլ, խեղդուէր, ճգնաւոր, խըստացաւ, շկըսուեցաւ. բըլբուլ, խեղ-դ-ուէր, ճգ-նա-ւոր, խս-տա-ցաւ, ս-կս-ու-ե-ցաւ.

տընկուեցաւ, աննւման, մտածեց, շուարած, կտրիճ, խմուի. տնկ-ու-ե-ցաւ, ան-ն-ման, մ-տա-ծեց, շ-ու-ա-րած, կ-տ-ր-ի-ճ, խ-մ-ու-ի.

ճըլվեց, բըլբեց, նշան, բռնատուն.

ճ-լ-վ-ե-ց, բ-լ-բ-ե-ց, ն-շան, բռ-նա-տուն.

\* Բըլբուլ, \* խեղդուէր, \* ճգնաւոր, \* խստացաւ, \* սկըսուեցաւ, \* տնկուեցաւ, \* աննման, \* մտածեց, \* շուարած, \* կտրիճ, \* խմուի, \* ճլվեց, \* բլբեց, \* նշան, \* բռնատուն:

16. ԲԻԻՐԱՊԱՏԻԿ.

Բիւր — տասը հազար. բիւրապատիկ — հազարապատկից էլ աւելի: Աստուած, ամենայն բան բո օրհնութեամբ է վինում, օրհնիր և ինձ: Աստուած կանչողն անյոյս չի մնալ: Աստուած հալալին կըտայ: Գողին էլ «թողութիւն» կայ, սուտ «մեղին», թողութիւն չըկայ: Անէճքն անիծողին կըղտունայ: Վարդապետին ասին՝ որդիդ մեռնի. ասաց՝ ես որդի չ'ունիմ, համա խօսքըդ խօսք չէ:

Բըղխում, կըտըրուի, թըթի, ապսպրածները, կնկան, մըթնեցաւ. բըլ-խում, կ-տը-րուի, թ-թի, ապ-սպրած-նե-րը, կն-կան, մթ-նե-ցաւ.

փռուել, հարստացան.

փռ-ու-ել, հա-րս-տա-ցան.

\* Բղխում, \* կտրուի, \* թթի, \* ապսպրածները, \* կնկան, \* մթնեցաւ, \* փռուել, \* հարստացան:

17. ՄՕՐ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԸ ՈՐԴՈՒՆ.

Մէկ կող կորեկի շարելը հեշա է, քան մէկ որդու մեծացնելը: Որդին որ բըռնումը

ձուլածնդ շինէ, մօր պարտքիցը չի կարող դուրս  
գալ: Գրած նամակը պատասխան կուզէ: Որ-  
դու համբար մօր սիրտը կամ կրակացնէ կամ  
կրկարմրեցնէ:

Կլտլուեցաւ, մղկտաս, զուարթ, սրբէիր, մարգարտէ, քննե.  
կար-ուե-ցաւ, մղ-կ-տաս, զ-ուարթ, սր-բէ-իր, մար-գր-տէ, ք-ննե.

\*Կարուեցաւ, \*մղկտաս, \*զուարթ, \*սրբէիր, \*մարգարտէ, \*քննե:

**ՅԱԻԵԼՈՒԱԾՔ**

1) ԿԵՆՒԱՆԻՆԵՐԻ ԵՒ ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

Կուռնկի կրկնոցին կասեն. «Գայ, գայ ճամբորդը»  
(Կուռնի):

Ծիտ, ծիտ, ծտարուն,  
Երբոր մթնի, գնաս տուն, թու...  
(Ճնդու-ի):

«Միա՛ւ, կատու».  
— Ո՛ւմ կատուն ես.

«Աղարէկի».  
— Ի՞նչ ես ուզում.

«Սեր ու կարագ».  
— Ո՛ւմ համար.

«Իմ որդկերանց համար».  
(Կուռն-):

Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Բո հայրն ի՞նչ, քո մայրն ի՞նչ,  
Բաշխույ հաւի աչերն ի՞նչ,  
(Ծիծեռնակ):

„ Բեռին մեռել է, քեռին մեռել է,  
մեռել է, մեռել է“.

— Ե՛րբբ, Ե՛րբբ, Ե՛րբբ.

„ Մը կը կէլ օրը մը կը կէլ օրը“.

— Ղ՞ճըթ, Ղ՞ճըթ, Ղ՞ճըթ:

(Գ-րբ):

Այ տերտեր, ջան տերտեր,

Ձեռ ուտում, չես խմում:

Քո փորը քանի՞ գրգռոց:

(Չ-հրէն):

Սրբայօն խփէ, խփայօն խաղայ,

Ակէ տիկէ տընազ է,

Էծիկ մէծիկ բզէզ է,

ՕՖ, տիֆ, նաղարայ,

Հար, Բաբա, Հարիսայ,

Քաթիպի կօճակ,

Պինտ պօլօճակ,

Ճըթ, պըթ:

(Ս-աղբ):

Սերին տախտակ՝ թըխկ թըխկ,

Ցածրի տախտակ՝ վըխկ վըխկ,

Մէջն է տուտուց տուտուտուց,

Տըկի բերան՝ վըզ վըզ:

(Ջ-բաղ):

2) ՕՐԱՑՈՅՑ, ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ.

Երկուշաբթի՝ շըլդորա:

Երեքշաբթի՝ տաշտարօրա:

Չորեքշաբթի՝ հաց կըթխեմ:

Հինգշաբթի՝ բաղնիս կերթամ:

Ուրբաթ՝ Թուրքի կիրակի:

Շաբաթ՝ ջհուզի կիրակի:

Պիրակի ու մեր կիրակի:

Տօ, անիրաւ, ի՞նչ բան անեմա՞:

Յանձարէն էշն ախոռումը կ'իմանայ, թէ օրն երկարացել է:  
Խուլ որ ջուրը ի՞նչն է, օրերը կըտարանան:

Մարտի Ինչ:

Լազլազը բնին:

Այնպէս կորաւ, ինչպէս Թաղի-պարբէ ագուաւը:  
Ժամը Ջաղի արեգակով պիտի դուրս գայ, Ծննդէն՝ միթնով:

Ձեռն է գալիս փաթիլ փաթիլ:

Թուրքը ասաց՝ բանս վատ է,

Պառաւն ասաց՝ մոզիս կորաւ:

Կայլն ասաց՝ փորիս դեղ է:

Ա՛նչէ, անձրե, ցած արի,

Բուսցուր ցորեն ու գարի,

Բուսցուր ծաղիկ, կանաչ խոտ,

Աւլէ՛ փոշի, մաքրէ՛ օդ:

Ա՛նձրե, անձրե, ցած արի,

Գալըդ ամենուս բարի:

Ագուաւի ձայնը թէ որ Աստուած լսէր, Ա-ս-տ-ա-լ-ա-ւ-ն ձիւն կըգար:

Պարմիր կանաչ գօտիկ:

(Մի-շալ):

Հանք մը ունիմ հանայ-հանայ,

Պատռները մըսրբխանայ,

Պաթնաղբիւրէն ջուր կըխմէ,

Արիւնծովէն ձայն կըհանէ:

(Որ-ս-մ):

Եկեղեցի մի կայ, շատ մեծ է,

Առանց սիւնի ու գերանի կանգնած է,

Հազարաւոր կանթեղներ առանց չուանի

Պախուած են, և վառ են առանց ձէթի:

(Երկն, և սարգէլ):

Լուսինն նոր շնորհաւոր,  
Ես մեղաւոր դու թագաւոր,  
Նստած բանիս՝ բարաբաթ,  
Կանգնած ջանիս՝ հարաբաթ:

Նուրին՝ նուրին եկել է,  
Աջայ հուրին եկել է,  
Շիլայ շապիք հագել է,  
Կարմիր գոտիկ կապել է,  
Եղ բերէք՝ մէջքը քսենք,  
Ձուր բերէք՝ գլխին ածենք,  
Մեր նուրինի փայլ տուէք,  
Ուտենք խմենք՝ քէֆ անենք:  
(Նորին-Լազարէ,  
Կասուրի Էրաշտին):

Ճըռ, ճըռ, ճշանակ,  
Աստուծոյ դուռը բանանք,  
Գուրսը ժամ ասենք,  
Ներս գանք՝ պատարագ անենք,  
կամ  
Կարկաշայ՝ կարինչակայ,  
Սև օձին՝ սև Սանօսին,  
Նէնէներ,  
Խուռնկ առէք՝ մոմ առէք,  
Տասներկու պատարագ արէք,  
Իմ կարմիր հաւկիթս էլ  
Գուրս բերէք:  
(Կրեղգուրի Ձարինի ֆիանի  
երաշտին, ճշանակը ձեռին):

Ալէլուիա՝ ալէլուիա,  
Հրէս եկաւ մի ձիաւոր,  
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,  
Աջու ձեռին աւետարան,  
Չախու ձեռին սաղմոսարան,  
Աջով գրէր՝ ձախով ջնջէր,  
Չախով գրէր՝ աջով ջնջէր,  
Բարեկամս երեսայից անուռն ի՞նչ է: (Այս անուռն):  
Չեր (այս անուռն) թախտին նստի,  
Գմիլիկ ձեռքը ջէրը տանի,  
Հինգ արասին ջէրից հանի,  
Սուրբ Սարգսին մատաղ անի:

(Սուրբ Սարգսի արմին):

Քան քան տարայ տարայ,  
Վեր ելայ բերդի վերայ,  
Կանչեցի՝ տէր-Ձարարա,  
Խուռնկ ու մոմ հաղիր արա,  
Առատուն պաշտում արա,  
Իրիկուն հսկում արա:  
Մէկն էն է պուճախ,  
Մէկն էս է պուճախ,  
Մեր քաւորենց  
Մեղրի պուճախ:

(Բարեկենդանի հանդիպում էրք):

3) ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐ.

Ղուռնգ՝ Ղուռնգ՝ էտի կաց,  
Ատամս դուռն վկայ կաց,  
Ի՞՞՞՞ որ հարցնիմս հաղիր կաց:

(Երանիկի աղբի):

Ալալիոս, Գալալիոս,  
Աղա Ստեփան, Ստեփանիոս,  
Կալիլ իմ կապիլ իմ,  
Ութը մատով, էրկու բթով,  
Սուրբ Սարգսի ձիուն ձարով,  
Աստուածածնի քաղցր կաթով... չի՛շ:

(Կարեկի կծու աղբի):

Մէ կտիր՝ էգնէն ծով կայ,  
Ծովի մէջը կալ կայ,  
Կալի մէջը դէզ կայ,  
Դէզի մէջը խուրձ կայ,  
Խուրձի մէջը հատիկ կայ,  
Հատիկ կու տանք՝ կու հանինք:

(Ալի հատիկի աղբի):

Գայլը կապիմ երկու բլթով,  
 Լ. ստուածածնայ քաղցր կաթով,  
 Սուրբ Սարգսայ ձիուն ձարով,  
 Տէր Մովսիսի գաւազանով,  
 Լուսաւորչայ սուրբ հաւատով,  
 Լեզուն կապուի ահռան թափուի,  
 Եկած ճամբան գայ մուրի,  
 Իմ տիրոջս խոջր տեսնի,  
 Կիւանքի պէս թող սասանի:

(Կոչել զայն):



2013

4009

« Ազգային գրադարան



NL0059812

